Արձանագրություն 1

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 թ.-ի օգոստոսի 31-ի նիստ։

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Ս. Դայանը, Ս. Կրոյանը, Վ. Հովհաննիսյանը։ Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. 2021-2022թթ. ուս. տարվա ուսումնական գործընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ։

2. 2021-2022թթ. ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների առաջադրում և քննարկում։

3. Ամբիոնի ընտրովի դասընթացների ծրագրերի քննարկում և հաստատում։

4. Առկա ուսուցման 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ։

5. Ընթացիկ հարցեր։

1. ԼՍԵՑԻՆ – 2021-2022թթ. ուս. տարվա ուսումնական գործընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - ինչպես նախորդ տարինրին, այնպես էլ այս տարի մինչև սեպտեմբերի 1-ը արդեն պետք է պատրաստ լինեն առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսության փաթեթները։ Classroom էլ. հարթակում արդեն ստեղծվել են առարկաների դասընթացները, որտեղ անհրաժեշտ է տեղադրել ուսումնական փաթեթները։ Առաջրիկա մեկ շաբաթվա ընթացքում անհրաժեշտ է իրականացնել այդ աշխատանքները։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն։

2. ԼՍԵՑԻՆ - 2021-2022թթ. ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների առաջադրման և քննարկման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - փաստացի կա մագիստրատուրայի առկա աշխարհագրության երկու, առկա լանդշաֆտային պլանավորման երկու, հեռակա լանդշաֆտային պլանավորման երկու ուսանող: Բակալավրիատի առկա աշխարհագրության 4-րդ կուրսում՝ 14 ուսանող: Ընդհանուր անհրաժեշտ է 14 ավարտական աշխատանքի և 6 մագիստրոսական թեզի թեմաներ:

Անհրաժեշտ է քննարկել և առաջարկել արդեն մշակված թեմաները:

Մի շաբաթվա ընթացքում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների տարբերակները անհրաժեշտ է արտահայտել գիտականության, բովանդակության, կրթական և դաստիարակչական ուղղվածություններով:

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Կարապետյանը - առաջարկում եմ, որ բոլոր թեմաները լինեն բարդության նմանատիպ աստիճանի, որպեսզի բոլոր ուսանողները գնահատվեն համարժեք աշխատանքի համար:

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - լիովին համաձայն եմ, պետք է աշխատել, որ բոլոր թեմաները բարդության համարժեք աստիճան ունենան:

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը - պետք է ուշադիր լինել, որպեսզի թեմաները չկրկնվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի ընտրովի դասընթացների ծրագրերի քննարկման և հաստատման հարցը:

4. ԼՍԵՑԻՆ - Առկա ուսուցման 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հարցը:

5. ԼՍԵՑԻՆ – Ռազմական աշխարհագրության առարկայի տարրերի՝ աշխարհագրական առարկաների մեջ ներմուծման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը – առաջարկում եմ, որ ի սկզբանե հասկանանք, թե ինչ կոմպետենցիաներով պետք է օժտված լինի ուսանողը, և դա պետք է լինի ռազմական աշխարհագրության առարկայի որոշակի կարևոր տարրերի ներմուծումը՝ աշխարհագրական մյուս առարկաների մեջ: Առաջարկում եմ, որ ուսանողը տեսական գիտելիքներից զատ, ունենա գործնական կարողություններ, որոնք օգտակար կլինեն թե՛ պատերազմական իրավիճաում, թե՛ քաղաքացիական խաղաղ պայմաններում: Առաջարկում եմ, որ յուրաքանչյուր առարկա ուսումնասիրենք ո՛չ թե

որպես դասընթացներ, այլ դրանց մեթոդաբանությունը, կիրառենք նաև մնացած դիսցիպլինների դասավանդման մեջ։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – բարձր գնահատելով ռազմական աշխարհագրության կարևորությունը, այս իրավիճակից ելնելով, առաջարկվում է, որ առարկաների դիսցիպլինի սահմաններում գործնական աշխատանքների մակարդակով, դասընթացների մեջ շոշափվի ռազմական աշխարհագրության կարևորությունը և կապը տվյալ առարկայի հետ։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ **Ն. Սամվելյան**

Ամբիոնի մասնագետ՝ **Ռ. Գոգորյան**

Արձանագրություն 2

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 թ.-ի սեպտեմբերի 24-ի նիստ։

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ս. Դայանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Աջամօղլյանը, Տ. Բաբայանը։ Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. Classroom էլեկտրոնային հարթակում էլ. դասախոսությունների փաթեթների բարելավման ուղղությամբ իրականացվող մշտադիտարկումների վերլուծություն։

2. Դասախոսների հաղորդումը հեռակա ուսուցման համակարգում 1-3-րդ կուրսերի լուծարքային փուլի մասին։

3. Հեռակա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում։

4. Բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն։

5. 2021-2022թթ. ուս. տարվա կուրսային աշխատանքների թեմաներ։

6. Վերանայել հարցատոմսերը, թեստերը, դրանց համապատասխանությունը հարցաշարերի հետ՝ միջանկյալ գրավոր աշխատանքների համար։

7. Ընթացիք հարցեր։

1. ԼՍԵՑԻՆ – Classroom էլեկտրոնային հարթակում էլ. դասախոսությունների փաթեթների բարելավման ուղղությամբ իրականացվող մշտադիտարկումների վերլուծության հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Յուրաքանչյուր ուսումնական տարի, ժամանակ առ ժամանակ կատարվում է մշտադիտարկում Classroom էլեկտրոնային հարթակում։ Մեկ ամսվա ընթացքում փաթեթները ի՞նչ վիճակում են գտնվում և ի՞նչ բարելավման ուղղություններ կարող եք առաջարկել։

Մանկ.գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը – Բոլոր փաթեթները ներառված են, ուսանողները ակտիվ մասնակցում են էլեկտրոնային հարթակում: Ամբիոնում համաձայնության եկանք, որ ուսումնական դասապրոցեսներում պետք է ներառվի աշխարհագրական խնդիրներ: Խնդրագրքում կան խնդիրները և դրանց լուծումն եղանակները, և ես արդեն իսկ դրանք ներառել եմ մեթոդիկայի դասընթացի մեջ: Նաև մանկավարժական պրակտիկաների ընթացքում ուսանողներին ներկայացնել խնդիրների կիրառման արդյունավետությունը:

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Դայանը – Ներառված է բոլոր անհրաժեշտ փաթեթները, չկա որևէ խնդիր այդ առումով: Փոփոխությունները նախապես արված է դասախոսությունների բովանդակությունների մեջ, ամբողջությամբ թարմացված են:

Ասիստենտ Վ. Հովհաննիսյանը – Բոլոր փաթեթները ներառված են, թեթև փոփոխություն եմ կատարել կապված ուսանողների ընդունակություններից: Եվ ուսանոները հեշտությամբ օգտվում են էլ. հարթակից:

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Բաղդասրյան - Ամեն ինչ ներառված է, նոր թարմացված նյութեր է տեղադրված: Դասախոսությունները, հարցաշարերը, առարկայական նկարագիրը և թեմատիկ տրոհումը ներկայացված է ուսանողին: Էլեկտրոնային հարթակում պահվում է կապը դասախոսի և ուսանողի միջև:

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ, պրոֆեսորի պ/կ Յու. Մուրադյանը – Նախատեսված բոլոր նյութերը տեղադրված է, արդի պահանջներին համապատասխան: Արդեն պատրաստ է նաև 2րդ կիսամյակի նյութերը: Էլեկտրոնային հարթակը անընդհատ վերահսկվում է, որպեսզի պահպանվի ակտիվությունը:

Աշխ, գիտ. թեկ, դոցենտ՝ Մ. Մուրադյանը – Փաթեթները վերամշակված են, ընթացքում էլի թարմացվում են: Հարթակում մշտապես ստուգումներ եմ իրականացնում դասախոս-ուսանող կապը պահելու համար:

Կա մի խնդիր Աշխարհագրություն մագիտրատուրա 2-րդ կուրսի հետ, մշտապես հաճախում է միայն մեկ հոգի և այդ ուսանողն էլ ասում է, հնարավոր է արդյո՞ք, որ դասերը կազմակերպվի օնլայն հարթակում: Ուսանողների ընդհանուր բացակայությունները շատացել են, հաճախում են շատ փոքր թվով ուսանողներ:

Գյուղ. տնտ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Կրոյանը - Բոլոր առարկաների էլեկտրոնային փաթեթները տեղադրված են և մշտապես պահպանվում է կապը ուսանողի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1-ին ուս. տարվա աշխատանքները համարել բավարար, ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ – Դասախոսների հաղորդումը հեռակա ուսուցման համակարգում 1-3-րդ կուրսերի լուծարքային փուլի հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Սեպտեմբեր ամսին բոլոր դասախոսները մասնակցել են պարտքերի մարման, լուծարքային փուլին։ Հակիրճ կարող եք նրկայացնել թե ի՞նչ վիճակում է։

Մանկ.գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը – Ուսանողներ են եղել, ովքեր ընդհանրապես չեն ներկայացել և չեն ստացել գնահատական լուծարքային 2-րդ փուլին, հավանաբար այդ պատճառով նրանք համալսարանից դուրս կմնան։ Ուսանողներն են՝ Գալուստ Օհանյան, Օկսաննա Խլղաթյան։

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Բաղդասրյան – Լուծարք ունեցել են երեք ուսանող, երկու հեռակա և մեկ առկա բակալավրիատում սովորող, երեքն էլ ստացել են դրական գնահատականներ։

Աշխ, գիտ. թեկ, դոցենտ՝ Մ. Մուրադյանը – Կար երկու ուսանող։ Վերջնարդյունքը դրական է փակվել։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Լուծարքի երեք ուսանող ունեի ինձ մոտ, վերջնաարդյունքը դրական եկավ։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն։

3. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքների թեմաների քննարկման և հաստատման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Առկա բակալավր և մագիստրատուրայի թեմաները արդեն քննարկել է և հիմա անհրաժեշտ է քննարկել և հաստատել հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաները։

Թեմաներն են՝

1. Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի աշխարհագրական-հայրենագիտական վերլուծության կրթադաստիարակչական դերը։

2. Տվյալ մարզի տվյալ համայնքի աշխարհագրական-հայրենագիտական վերլուծության կրթադաստիարակչական դերը։

3. Եղեգիս գետի հովտի երկրազբոսաշրջային հնարավորությունները և դրա կրթադաստիարակչական դերը։

4. Քարահունջի և Մեծամորի աստղադիտարանների գիտակրթական նշանակությունը և դերը սովորողների աշխարհագրական մշակույթի ձևավորման գործում:

5. Հայաստանը անտիկ շրջանի աշխարհագրական աշխատություններում և դրանց կրթադաստիարակչական նշանակությունը:

6. Շիրակի մարզի բնապատմամշակութային հուշարձանները և դրանց դերը գիտակրթական զբոսաշրջության զարգացման գործում:

7. ……մարզի……համայնքի հայրենագիտական աշխարհագրական վերլուծությունը Հայրենագիտություն դպրոցական դասընթացում

8. …մարզի … համայնքի համալիր աշխարհագրական վերլուծությունը Հայրենագիտություն դասընթացում:

9. … համայնքի բնական և պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրության դերը սովորոների հայրենագիտական կրթության գործում:

10. ՀՀ որևէ համայնքի (ուսանողի ընտրությամբ) բնատնտեսական ներուժի վերլուծությունը Հայաստանի աշխարհագրության դպրոցական դասընթացի համատեքստում:

11. Սյունիքի մարզի բնակչության միգրացիայի և տարաբնակեցման արդի հիմնախնդիրները / հետապատերազմյան ժամանակաշրջանում / Հայաստանի աշխարհագրություն դասընթացում:

12. ՀՀ ջրային ռեսուրսների պահպանության հիմնախնդիրը և դրա կրթական նշանակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ – Բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ովքե՞ր ունեն մանկավարժական պրակտիկաներ, շատ հակիրճ կխնդրեմ ներկայացնել ընթացքի վերաբերյալ:

Աշխ, գիտ. թեկ, դոցենտ՝ Մ. Մուրադյանը – Մանկավարժական պրակտիկան 3-րդ կուսերի մոտ շատ լավ է ընթանում, ամեն ինչ նորմալ է: Մեկ ուսանող կա, որ չի ներկայանում պրակտիկաների, համալսարանից հեռացվելու պատճառով:

Մանկ.գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը – Արդեն երկու շաբաթ ընթանում է պրակտիկան, շատ լավ ընդունեցին դպրոցում, ամեն ինչ նորմալ է, չկա խնդիրներ։

Ասիստենտ Վ. Հովհաննիսյանը – Պրակտիկան ընթանում է նորմալ, կա մեկ ուսանող, որ չի հաճախում, դեկանը տեղյակ է։

Մանկավարժական պրակտիկաների ժամանակ դասախոսներին բաշխում են տարբեր դպրոցներ, առանց դասախոսի հետ խորհրդակցելու։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ֆակուլտետի նիստում անպայման կբարձրացվի՝ դպրոցները բաշխելիս դասախոսների հետ հարմարացնելու հարցը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

5. ԼՍԵՑԻՆ – 2021-2022թթ. ուս. տարվա կուրսային աշխատանքի թեմաների հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Հարգելի գործընկրներ, կուրսային աշխատանքների թեմաները երկուշաբթի՝ սեպտեմբերի 27-ին ներկայացնել ամբիոն։ Կուրսային աշխատանքի յուրաքանչյուր թեմայի պլանում, վերջում ավելցարեք մի կետ՝ այդ թեմայի դասավանդումը դպրոցում։ Թե ինչպե՞ս ուսանողը կդասավանդի տվյալ թեման դպրոցում։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

6. ԼՍԵՑԻՆ – Ամիոնի անվան փոփոխության հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Օրեր առաջ տեղի ունեցավ քննարկում, որտեղ առաջարկվեց մասնագիտացման անվանման փոփոխության հարցը։

Մասնագիտացման անվան փոփոխությունը՝ բակալավրիատում ասիստնետ՝ Վ. Հովհաննիսյանը առաջարկեց անվանել Աշխարհագրություն՝ լրացուցիչ դպրոցական զբոսաշրջություն։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Բակալավրիատի համար նոր ուսումնական փաթեթի կազմելու հարցով կզբաղվեն՝ Վ. Հովհաննիսյանը. Ա. Մինասյանը և ես։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միաձայն քվեարկությամբ՝ ընդունել ի գիտություն

7. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական դաշտային պրակտիկաների վերականգնման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Առաջարկվում է վերականգնել ուսումնական դաշտային պրակտիկաները։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միաձայն քվեարկությամբ՝ ընդունել ի գիտություն

8. ԼՍԵՑԻՆ – Մագիտրատուրայում նոր մասնագիտության հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Առաջարկվում է մագիստրատուրայում Սերվիս բաժնի բացումը։

Անհրաժեշտ է կազմել դասախոսների խումբ, ովքեր կհավաքեն ուսումնական փաթեթները։ Այդ հարցով կզբաղվեն՝ Յու. Մուրադյան, Մ. Մուրադյանը, Ս. Դայանը, Ս. Բաղդասարյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մաթոսյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միաձայն քվեարկությամբ՝ ընդունել ի գիտություն

9. ԼՍԵՑԻՆ – Տ. Բաբայան, Ա. Աջամօղլյան – «Երկրատեղեկատվական համակարգեր» ուսումնաօժանդակ ձեռնարկի հրապարակման երաշխավորելու հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Կխնդրեմ շատ կարճ ներկայացնել, թե ինչ փոփոխություններ և լրամշակում է կատարվել ուսումնական ձեռնարկում։

Քարտեզագիր Տիգրան Բաբայանը - Քանի-որ տեխնոլոգիաները զարգանում են ավելի արագ, քան մենք կարող ենք հաստատել, ստիպված գիրքը վրանայվել է։ Բոլոր օրինակները տեղայնացված են։ Բոլոր հարցադրումները ուղեկցվում են օրինակներով, առաջադրանքներով։ Քանի-որ տեխնոլոգիաների տիրապետման դժվարություն կա՝ հավելվածում դասերի վենդորական տարբերակով, բոլոր աշխատանքների կատարման գործընթացը լուսաբանված է։ Ներկայացված է աշխատանքային գիրք և կենսունակ է որոշակի խնդիրներ բացատրելու, ուսումնասիրելու և լուծելու։

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ա. Աջամօղլյանը – Բոլոր նկատառումները հաշվի են առնվել և կատարվել ուղղումներ

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Դայանը – Ողջունելի է, որ կատարվում են նմանատիպ աշխատանքներ։ Ձեռնարկում ներկայացված օրինակները շատ հետաքրքիր էին և ուսումնական գործընացում կարևոր տեղ ունեն։

Գյուղ. տնտ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Կրոյանը – Նմանատիպ աշխատանքներ կան, բայց այս աշխատանքը յուրօրինակ է նրանով, որ շատ պարզ, մատչելի և հասկանալի լեզվով է ներկայացված, որով որ ձեռնարկը աչքի է ընկնում։

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ, պրոֆեսորի պ/կ Յու. Մուրադյանը – Շատ հետաքրիր գործ է կատարվել: Բազում փոփոխություններ կատարելոց՝ բոլոր պահանջների համապատասխան ներկայացվել ամբիոն: Տվյալ ձեռնարկը կարևոր է համարվում նաև ուսանողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնը երաշխավորում է ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ հրատարակման երաշխավորելու հայցով:

10. ԼՍԵՑԻՆ - Ա. Խոեցյան, Ս. Կրոյան – «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկի հրապարակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ասիստենտ Վ. Հովհաննսիյանը - Աշխատանքը ողջունելի է, որովհետև դասախոսի և ուսանողի ձեռքի տակ միշտ կլինի տվյալ ձեռնարկը: Այս ձեռնարկը նորովի մոտեցում ունի: Բովանդակային, ակադեմիական, մասնագիտական և մեթոդական առումներով համապատասխանում է ուսումնական ձեռնարկների ներկայացվող պահանջներին:

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ, պրոֆեսորի պ/կ Յու. Մուրադյանը – Դրական կարծիք եմ արտահայտում ուսումնական ձեռնարկի վերաբերյալ:

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Կազմակերպվել են դաշտային պրակտիկաներ և շատ կարևոր է, որ ուսումնական ձեռնարկում բերված են օրնակներ ոչ միայն Հայաստանի Հանրապետության տարածքից, այլ նաև այն տարածքներից: Եվ շատ կարևոր է, որ այս հայերեն լեզվով միակ ուսումնական ձեռնարկն է:

Քարտեզագիր Տ. Բաբայան – Կարծում եմ, որ ՀՊՄՀ-ից բացի, մյուս կրթական հաստատություններում նույնպես կիրառվի, որովհետև օրինակները բավականին խոսուն և ժամանակակից են:

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ա. Մինասյանը – Առաջարկում եմ ձեռնարկում ավելացնել գործնական առաջադրանքներ, խնդիրներ:

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ա. Աջամօղլյանը – Շատ կարևոր է, որ նորարարությունը արտացոլված է: Այս ձեռնարկը կտա նոր ազդակ, որով կվերանայվեն դասագրքերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնը երաշխավորում է ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ հրատարակման երաշխավորելու հայցով:

11. ԼՍԵՑԻՆ – Վ. Գրիգորյան, Գ Հովհաննիսյան, Ն. Սամվելյան – «Զբոսաշրջության աշխարհագրություն» ուսումնական ձեռնարկի հրապարակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ուսումնական ձեռնարկը՝ Զբոսաշրջության աշխարհագրության ռեգիոնալ վերլուծությունն է: Լրամշակված վերջնական տաբերակը արդենպատրաստ է:

Մանկ. գիտ. թեկ, դոցենտ Ս. Դայանը – Կատարված աշխատանքները շատ ընդունելի և հասկանալի են:

Աշխ. գիտ. թեկ, դոցենտ, պրոֆեսորի պ/կ Յու. Մուրադյանը – Բավական հետաքրիր, արդիական և անհրաժեշտ աշխատանք է: Սա հնարավորություն կտա ուսանողին տվյալ ոլորտի մեջ զարգանալ: Երաշխավորում եմ տպագրության:

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ներկայացված է շատ սպեցիֆիկ մոտեցում: Նպատակն է եղել ներկայացնել այնպիսի տարածաշրջաններ և դրանց կազմում երկրներ, որոնց զբոսաշրջային պոտենցիալը մեծ է և այն երկրները ունեն զբոսաշրջության զարգացման հեռանկարներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնը երաշխավորում է ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ հրատարակման երաշխավորելու հայցով:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Ռ. Գոգորյան

Արձանագրություն 3

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 թ.-ի հոկտեմբերի 1-ի արտահերթ նիստ։

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Ս. Բաղդասարյանը, Ս. Խաչատրյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Մինասյանը, Մ. Մաթոսյանը։ Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. Բակալավրական և մագիստրոսական համակարգերում նոր մասնագիտություններ ձևավորելու հարցի քննարկում։

1. ԼՍԵՑԻՆ – Բակալավարական և մագիստրոսական համակարգերում նոր մասնագիտություններ ձևավորելու հարցի քննարկման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Առաջարկվում է բակալավրական և մագիստրոսական համակարգերում նոր մասնագիտություններ ձևավորել՝ աշխարհագրության հեղինակությունը և դիմորդների հոսքը մեծացնելու նպատակով։ Մագիտրոսական համակարգում ձևավորված մասնագիտությունը մանկավարժական որակավորում չի ունենա։

Առաջարկում եմ բակալավրիատում Սերվիս և կրթական զբոսաշրջություն, մագիստրատուրայում՝ Սերվիս և կրթական ոլորտում ծառայությունների կազմակերպում։

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ Ս. Խաչատրյան – Առաջարկում եմ բակալավրիատում ձևավորել՝ Սերվիս (Կրթական ոլորտի ծառայությունների կազմակերպում) մասնագիտությունը։

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ Ս. Բաղդասարյանը – Իսկ մագիստրատուրայում՝ առաջարկում եմ ձևավորել՝ Սերվիսի կառավարում մասնագիտությունը։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Առաջարկում եմ Սերվիս (Կրթական ոլորտի ծառայությունների կազմակերպում)՝ փոխարեն մասնագիտության անվանումը ձևակերպել հետևյալ կերպ՝ Սերվիս և կրթական ոլորտի ծառայությունների կազմակերպում։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բակալավրական համակարգում՝ Սերվիս (Կրթական ոլորտի ծառայությունների կազմակերպում) մասնագիտության ձևավորում։ Բոլորը կողմ, 1՝ ձեռնպահ՝ ընդունել ի գիտություն։

Մագիստրոսական համակարգում՝ Սերվիսի կառավարում մասնագիտության ձևավորում։ Միաձայն քվեարկությամբ՝ ընդունել ի գիտություն։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Ռ. Գոգորյան

Արձանագրություն 4

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և մանկավարժության ամբիոնի 2021 թ.-ի հոկտեմբերի 7-ի համատեղ նիստ։

Մասնակցում էին ԱԴՄ ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Մ. Մուրադյանը, Ս. Դայանը, Ս. Խաչատրյանը, Վ. Հովհաննիսյանը, Տ. Բաբայանը, Ա.Մինասյանը։ Մանկավարժության ամբիոնի դասախոսներ՝ Ա. Թոփուզյանը, Ն. Կարապետյանը, Լ. Ասատրյանը, Լ. Նազարյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Բաղդասարյանը։ Նիստը ղեկավարում էր ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը հրապարակային պաշտպանության երաշխավորման հարց։

1. ԼՍԵՑԻՆ – ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Հարգելի գործընկերներ, լսենք ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանի թեկնածուական ատենախսության՝ «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրական ուսուցման գործընթացում» թեմայի նախապաշտպանությունը՝ ԺԳ.00.02. «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավաժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար։ Աշխատանքը ներկայացվել է մի քանի անգամ, արվել են դիտողություններ, առաջարկություններ։ Նաև ասպիրանտը, անհրաժեշտ է, որ նշի թե ինչպիսի փոփոխություններ է իրականացրել աշխատանքում, ներկայացված դիտողություններից հետո։ Խոսքը փոխանցվում է ատենախոսին։

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ՝ ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Անի Մկրտումյանը – 17 բոպե տևողությամբ, «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրական ուսուցման գործընթացում» աշխատանքը, այնտեղ առկա է՝ բովանդակություն, ներածություն, հիմնական մաս, եզրակացություններ, առաջարկություններ, գրականության ցանկ, հավելվածներ: Հստակ նշվեցին հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, արդիականությունը, գիտական նորույթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Հարգելի գործընկերներ, եթե կան հարցեր, համեցե՛ք:

Մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Ա. Թոփուզյանը– Ո՞ր տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ եք աշխատել: Ի՞նչն է Ձեր աշխատանքի նորույթը:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը - Աշխատանքում անդրադարձել ենք քննատադատական մտածողության, նախագծային, պրոբլեմային, տեղեկատվական ուսուցման տեխնոլոգիաներին: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի շրջանակներում մշակվել է սկզբնաղբյուրով աշխատելու առաջադրանք, որի միջոցով տարբեր աղբյուրները համեմատելու, վերլուծելու կարողությունները կզարգանան: Օրինակ՝ այս առաջադրանքի առաջին հատվածում բնօրինակ տեքստն է, նրա ամբողջաան հղումը, երկրորդում դուրս են բերվում գլխավոր հասկացությունները: Երրորդում վերաշարադրված տեքստն է, չորրորդում ամփոփումն է՝ ներտեքստային հղում տալով, հինգերորդում՝ սովորողն իր կարծիքն է արտահայտում տրված աղբյուրի վերաբերյալ: Մյուս օրինակը նախագծային ուսուցման տեխնոլոգիային առնչվող օրինակն է: Ներկայացված է Սյունիքի մարզի բնառեսուրսային ներուժի ուսումնասիրմանը նվիրված նախագիծը, որտեղ առաջին փուլում տրվում է կամ աշակերտների միջոցով ձևակերպվում է հետազոտության հարցը՝ «Ինչպե՞ս կարելի է օգտագործել Սյունիքի մարզի բնառեսուրսային ներուժը տնտեսության կայուն զարգացման նպատակով»: Երկրորդ փուլում նախատեսվում է տվյալների հավաքման միտված աշխատանքներ: Հավաքվում են հետազոտության հարցին համապատասխան տվյալներ, ուսումնասիրվում են կլիման, հանքավայրերը, Սյունիքի զբոսաշրջությունը: Երրորդ փուլը «Պատկերումն» է, որի ընթացքում հավաքված տվյալները մշակվում են, ներկայացվում քարտեզների, դիագրամների միջոցով, այնուհետև՝ հետազոտության պատմության ստեղծումն է և գործողությունների ծավալումը: Մենք կատարելագործել ենք նշված տեխնոլոգինաները, մշակել նրանց հաապատասպան առաջադրանքներ:

Մանկ. գիտ. դոկտեր, պրոֆեսոր՝ Լ.Ասատրյանը – Ի՞նչ եք հասկանում տեխնոլոգիական համալիր ասելով: Բլումի տաքսոնոմիան միջո՞ց եք համարում:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը – Տեխնոլոգիական համալիրն ուսուցման տեխնոլոգիաների ամբողջությունն է: Բլումի տաքսոնոմիան կարող է արդյունավետ միջոց լինել կրթական նպատակների և վերջնարդյունքների սահմանման համար: Շատ կարևոր է տաքսոնոմիայում նշված գործողությունների ճիշտ հերթականությունը պահպանելը, հենց առաջին մակարդակից, աստիճանից սկսելը: Օրինակ՝ ներկայացնենք Անդերսենի և այլոց կողմից Բլումի տաքսոնոմիայի վերանայված տարբերակը, որը ներկայումս ավելի կիրառական է (հիշել, հասկանալ, կիրառել, վերլուծել, ստեղծել): Եթե մենք դպրոցականներին չենք հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնք տաքսոնոմիայի ստորին շերտին, այսինքն՝ ավելի պարզ մտածական գործողություններին են միտված, և միանգամից հանձնարարում ենք վերլուծելու, ստեղծելու հետ կապված առաջադրանքներ, ապա մտածական, հետազոտական կարողությունների զարգացումը չեն կարող բնականոն ընթանալ: Այդ պատճառով Բլումի տաքսնոմիայի կիրառումը հստակ միջոց է դեպի մեր նպատակը՝ դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը: Վերջնարդյունքների սահմանման համար կարող է այն կիրառվել, ինչպես նաև հենց ուսուցման գործընթացում առաջադրանքների մեջ: Օրինակ՝ մշակել նախագիծ տվյալ բնակավայրի կլիմայի և տարածքային պլանավորման ուղղությամբ, որը բարդ առաջադրանք է՝ 2 - 3 ամիս տևողությամբ աշխատանքներ պահանջող: Դասի պլաններում ներկայացվել է մեկ դասի ընթացքում կիրռված մեթոդները, առաջադրանքների օրինակները:

Մանկ. գիտ. դոկտեր, պրոֆեսոր՝ Լ.Ասատրյանը – Դպրոցականների քանի՞ հետազոտական կարողություններ կան:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը – Քանի որ իմ աշխատանքային փորձը կապված է «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում աշխատելու հետ, որը Միջազգային Բակալավրիատ կազմակերպության անդամ է, ապա կներկայցնեմ հետազոտական կարողությունների իմ կիրառած տարբերակը: Միջազգային Բակալավրիատի դասակագմամբ հետազոտական կարողություններն առանձնացվում են երկու խոշոր խմբով: Դրանք են տեղեկտվական գրագիտության կարողությունները, օրինակ՝ հավաքել, գրանցել տվյալները տեղեկույթի տարբեր աղբյուրների միջև, և մեդիագրագիտության կարողությունները՝ նույնը մեդիայի աղբյուրների միջև: Նաև, բացի այս ընդհանրական կարողություններից ես աշխարհագրության հետազոտական գործընթացին բնորոշ կարողությունների զարգացման ուղղությամբ եմ աշխատել: Օրինակ՝ աշխարհագրական հետազոտական հարցեր ձևակերպելը, տվյալներ հավաքելը, պատկերելը, քարտեզագրումը:

ԱԴՄ ասիստենտ՝ Վ. Հովհաննիսյանը – Ձեր խոսքում նշեցիք, որ առաջարկում եք դպրոցում հետազոտողի հաստիք ավելացնել: Այսինքն՝ Դուք մտածում եք, որ

ներկայումս գործող աշխարհագրության ուսուցիչները չե՞ն կարողանում կատարել այս աշխատանքը:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը – Քանի որ հետազոտական կարողությունները վերառարկայական են, հետազոտական աշխատանքների արդյունավետ կատարման համար օգուտ է միջառարկայական հետազոտական աշխատանքներ կազմակերպելը, հետազոտական գործընթացի համալիր պլանավորումը: Բացի աշխարհագրության ուսուցչուհի լինելուց՝ ներկայումս «Շիրակացու ճեմարանում» աշխատում եմ որպես հետազոտական աշխատանքների համակարգող: Մեր աշխատանքային պրակտիկայի ընթացքում իրականացրել ենք ըստ տարիքային խմբերի դպրոցականների հետազոտական կարողությունների պլանավորում կրտսեր, միջին, ավագ դպրոցների տնօրենների, ծրագրերի համակարգողների հետ՝ հաշվի առնելով դպրոցի հնարավորությունները: Ներառել ենք և՛ հետազոտության հարցի ձևակերպման, և՛ հղումների կատարման, և՛ մեդիայի հետ աշխատանքներ և այլն:

Մանկ. գիտ. թեկ. դոցենտ՝ Լ. Նազարյանը – Ունեմ մեկ դիտարկում, անհրաժեշտ է կենտրոնանալ Ձեր կատարած հետազոտությունների վրա, ներկայացնել ասպիրանտի կողմից մշակված դասի, կիրառվող աշխատանքների, վարժությունների օրինակներ:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Դպրոցում ուսուցանվող ցանկացած առարկա ունի աշակերտների ստեղծագործական կարողությունները խթանելու, զարգացնելու մեծ ներուժ: Կատարել եք բավականին ծավալուն, բովանդակալից, հետաքրքիր աշխատանք: Ստեղծագործական կարողությունների զարգացման ի՞նչ ներուժ եք տեսնում աշխարհագրության տեսանկյունից:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը – Ինչպես նշված են աշխարհագրության առարկայական ծրագրերում և չափորոշիչներում, հանրակրթական դպրոցներում դասավանդվող միակ դասընթացը «Աշխարհագրությունն» է, որի ընթացքում ուսուցանվում է աշխարհի բնության, բնակչության, տնտեսության տարածաժամանակային կապերը, Հայաստանի աշխարհագությունը:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Աշխարհագրությունը երեևույթների ուսումնասիրմանը ցուցաբերում է համակարգային մոտեցում: Այս մոտեցումը ինչպե՞ս է ազդում դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա:

ԱԴՄ ամբիոնի ասպիրանտ՝ Ա.Մկրտումյանը – Աշխարհագրական միևնույն երևույթը կարելի է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ կիրառելով աշխարհագրական բազմաշերտ «ոսպնյակները» , որոնք ներկայացած են “National Geographic” կազմապերպության ուղեցույցերում: Աշխարհագրությունը կառուցողական գիտություն

է, աշխարհագրական հետազոտությունների միջոցով կարելի է կատարել աշխարհագրական կանխատեսում:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Եթե այլ հարցեր չկան, խոսքը փոխանցենք աշխատանքի ղեկավար պարոն Մուրադյանին:

Աշխ. գիտ. թեկ. դոցենտ, պրոֆեսորի պ/կ, գիտական ղեկավար՝ Յու. Մուրադյանը– Հարգելի՛ գործընկերներ,ուսումնառության այս տարիների ընթացքում Անին մեծ պահանջկոտություն ցուցաբերեց աշխատանքի, թեմայի նկատմամբ, կատարեց հսկայական աշխատանք: Նա բարեխիղճ է, աշխատասեր: Անիի մոտ պրպտող միտքն ակտիվ է: Կատարել է տքնաջան, համառ, ինքնուրույն աշխատանք:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Լսենք ընդդիմախոսների կարծիքները:

Մանկ. գիտ. թեկ. դոցենտ, ընդդիմախոս՝ Ա. Մինասյանը – Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից: Ներառում է աղյուսակներ, գծակարգեր: Առկա է թեմային վերաբերող գրականության ցանկ և հավելված: Ներածության մեջ նշված են աշխատանքի արդիականությունը, վարկածը, մեթոդաբանությունը, տեսական ու գործնական նշանակությունը, նորույթը: Ատենախոսությունում ներկայացված են աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեսական հիմքերն ու նախադրյալները, կարողությունների զարգացման ուղիներն ու միջոցները, Բլումի ուսումնական տաքսոնոմիայի էությունն ու կառուցվածքը, դրա կիրառությունն աշխարհագրության ուսուցման գործընթացում: Ուշագրավ է, որ հեղինակը փորձ է կատարել մշակել աշխարհագրության ուսուցման կազմակերպման նոր մոտեցումներ՝ կիրառելով հոգեբանական գիտության ձեռքբերումները, հատկապես առաջնությունը տալով ոչ թե ուսուցման մեթոդներին, միջոցներին, ուսուցիչ - աշակերտ փոխհարաբերությունների ուսումնասիրմանը, այլ առավել արդիական, այն է՝ սովորողների ուսումնական նպատակներին և դրանցից բխող սպասվելիք վարքագծի ձևավորմանը, սովորողների մասնագիտական կոմպետենցիաների գնահատմանն ու ուսուցման շարունակականության գաղափարը: Այս հարցերն այսօր արդիական են աշխարհագրության ուսուցման մեթոդիկա գիտության համար և ունեն առավել խոր հետազոտության կարիք: Աշխատանքում նկատվում է հեղինակի ինքնուրույնությունը, սեփական դիրքորոշումն ու տեղեկացվածության բավարար մակարդակը հետազոտության հետագա կազմակերպման և իրականացման համար: Աշխատանքի բովանդակությունը, հետազոտության տրամաբանությունը համապատասխանում են առաջադիր նպատակին և խնդիրներին: Երաշխավորում եմ հրապարակային պաշտպանության:

Մանկ. գիտ. թեկ. դոցենտ, ընդդիմախոս՝ Ն. Կարապետյանը – Կրթական համակարգի արդիականացման համատեքստում կոմպետենտային մոտեցումը հայեցակարգային է և գերակա նշանակություն ունի, որը իր հերթին բերում է նաև կրթության բովանդակության համալրմանը, ինտեգրմանը և դիֆերենցմանը, և այս համատեքստում սովորողների հետազոտական կարողությունների ձևավորումը կարևոր պայման է, որը ամրագրված է նաև կրթական չափորոշիչներում և ուսումնական ծրագրերում: Աշխարհագրական կրթությունը, ինչպես այսօր լսեցինք, աշխարհայացքային նշանակություն ունեցող է, և ընդհանրացնում է աշխարհի մասին գիտական գիտելիքները, օրինաչափությունները, փոխադարձ կապերը, այդ պատճառով հետազոտական կարողությունների զարգացման համար նման դիտարկումն առանցքային նշանակություն ունի, հենքային է, նպաստում է սովորողների ուսումնական առանցքային կոմպետենցիաների ձևավորմանը: Այս տեսանյունից ներկայացված աշխատանքն արդիական է և միտված է որոշակիացնելու դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում: Այն ժամանակակից մանկավարժական հարացույցերի համատեքստում ատենախոսի կողմից հիմնավորվել և ներկայացվել է աշխատանքի և՛ գործնական, և՛ մանկավարժական նշանակությունը: Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության բաղադրիչները, արդիականությունը, նպատակը, խնդիրը, նորույթը, որոնք այսօր ներկայացվեցին: Ատենախոսության առաջին գլխում վերլուծված է հետազոտահեն ուսուցման տեսական մեթոդաբանական հիմքերը, աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացը և տրված են դրանց պայմանները: Հենվելով մի շարք մտածողների հայեցակարգային մոտեցումների վրա՝ ներկայացված է ուսուցչի մասնագիտական կոմպետենտության դերը սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ստեղծագործական, հետազոտական կարողությունների զարգացման, ինչպես նաև ինքնուրույն հետազոտական գործունեության կազմակերպման գործում: Ատենախոսի կողմից կատարվել է համեմատական վերլուծությունների արտերկրյա և հայ մտածողների աշխատանքների շեշտադրվել: Ատենախոսն անդրադրաձել է հայ մանկավարժական մտքի պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին, նշել որքան են մեր երախտավորները կարևորել հետազոտական մեթոդների կիրառման նպատակահարմարությունն ուսուցման գործընթացում: Առաջին գլխի «Դպրոցականների հետազոտական կարողությունների գործընթացը և պայմանները» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում ատենախոսն անդրադարձել է միջառարկայական կապերի ապահովմանը, սակայն բանավոր ներկայացման ընթացքում հստակորեն չեն շեշտադրվել համապատասխան օրինակները: Հետազոտական աշխատանքներում միջառարկայական կապերի ապահովման վերաբերյալ հսկայական աշխատանք է կատարվել, բայց բանավոր

խոսքում այսօր մասամբ է ներկայացվել: Ներկայացված է Միջազգային Բակալավրիատը: Ուշագրավ է այն, որ այն չափանիշները, որոնք ընդունված են Միջազգային Բակալավրիատում, հեղինակը տեղայնացրել է, հարմարացրել ՀՀ կրթական ընդունված վերջնարդյունքներին, ներկայացրել նաև իր մշակումները: Ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթակետում վերլուծված են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման մի շարք ժամանակակից տեխնոլոգիաներ: Նաև նախանշված են դրանց կիրառման մեխանիզմները: Դիտարկված է առարկայական չափորոշիչներում ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների գործնական նշանակությունը, որոնք դպրոցականներին հնարավորություն են տալիս 21-րդ դարին համարժեք գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինելու: Ատենախոսը հիմնավորում է, որ ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ուսումնական գործընթացի վերահսկողության տարբեր ձևերը, գնահատման սանդղակները: Վերջիններիս բանավոր խոսքում մասամբ անդրադարձ կատարվեց, այնինչ աշխատանքում առկա է ատենախոսի մշակած հետազոտական կարողությունների ստուգման սանդղակներ: Մշակվել են մի շարք հետազոտական նախագծեր, առարկայական դասերի նմուշ- օրինակներ, հետազոտական առաջադրանքներ, որոնք ունեն ստեղծագործական ընթացակարգ և տրամաբանական հանգուցալուծում: Ուսումնական ցիկլին, Բլումի աստիճանակարգին ատենախոսն այսօր անդրադարձավ: Հետազոտության վերջին գլուխը նվիրված է ատենախոսի տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփմանը, հետազոտության տարբեր փուլերում ներկայացված են դպրոցականների հետազոտական կարողությունների ձևավորվածության ախտորոշման միջոցները, գնահատման չափանիշները, իսկ ներկայացված հարցաթերթի բովանդակությունը բխում է փորձարարության նպատակից: Արդյունքները հավաստի են, տրամագրերը և աղյուսակները ամփոփում են կատարված աշխատանքը, և փաստում դրանց դրական դինամիկան: Ատենախոսությունն ավարտուն է, ինքնուրույն, արդիական, շարադրված գիտական լեզվով, ունի տրամաբանական կուռ կառուցվածք և բավարարում է աշխատանքին ներկայացվող պահանջներին: Այնուամենայնիվ, ունեմ նաև որոշ դիտարկումներ և առաջարկություններ: Առաջարկում ենք հեղինակի կողմից ըստ դասարանների մշակված հետազոտական նախագծերը, առարկայական դասերի նմուշ- օրինակները, տեխնոլոգիական քարտերը ամբողջացնել փոքրիկ ուսումնամեթոդական ձեռնարկում, որը գործնականում կհարստացնի գործող և ապագա մանկավարժների մանկավարժական զինանոցը:

Այսպիսով՝ Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման

գործընթացում» խորագրով ատենախոսությունը՝ ներկայացված ԺԳ 00.02. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա աշխարհագրություն մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը, կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Մանկ. գիտ. դոկտեր, պրոֆեսոր՝ Լ.Ասատրյանը – Նախ արժևորենք աշխատանքը, ապա կանդրադառնանք որոշ բացերի: Կատարված է լայնածավալ հետազոտություն: Ատենախոսի ամբողջ խոսքից պարզ երևաց նրա առարկայական կոմպետենտությունը և հետազոտական կոմպետենցիաների առկայությունը: Շատ մեծ ծավալի հետազոտական աշխատանք է կատարված: Գիտական նորույթը առկա է: Այս աշխատանքը գալիս է լրացնելու աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում եղած բացը, նաև աշխարհագրության ուսուցման տեսության մեջ եղած բացերը, որոնք լրացվում են ամենաժամանակակից տեսական մոտեցումներով, մեթոդներով, տեխնոլոգիաների առաջադրմամբ: Մենք ունեցել ենք աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի վերաբերյալ այլ աշխատանքներ, բայց նրանցում եղել են բացեր: Այս աշխատանքը լիարժեքացնում է աշխարհագրության ուսուցման տեսությունը, մեթոդիկան: Կարծում եմ, որ ինքը՝ հետազոտողը, մեծ ներդրում ունի աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում ժամանակակից մանկավարժական մոտեցումներից ելնելով: Ամբողջ աշխատանքը համապատասխանում է ժամանակակից մանկավարժական հարացույցերին: Աշխատանքի վերաբերյալ հնչած դիտարկումները այնպսիսի թերություններ չեն, որոնք ազդեն աշխատանքի ամբողջ գիտական արժեքի, նրա գիտամեթոդական նշանակության վրա: Ես կարծում եմ, աշխատանքն արժանի է հրապարակային պաշտպանության և երաշխավորում եմ, որ ներկայացվի հրապարակային պաշտպանության:

Աշխ. գիտ. թեկ. դոցենտ՝ Ս. Խաչատրյանը – Ատենախոսի աշխատանքն ավելի ամբողջական է դարձել: Նա առանց ավելորդ շտապողականության՝ գիտական աշխատանքն իրականցրել է առաջնորդվելով քայլերի հավասարակշռված և տրամաբանական հաջորդականությամբ: Ատենախոսն ունի մեծ ներուժ:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Անին ծայրահեղ բծախնդրություն ցուցաբերեց իր աշխատանքի նկատմամբ: Եվ արդյունքում, ինչպես հավաստեցին մասնագետները, ստացվեց աշխատանք, որն իր բոլոր չափանիշներով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին թե՛ գիտականության, թե՛ գիտամեթոդական ասպեկտներով, թե՛ կիրառական արժեքով: Ես ևս երաշխավորում եմ հրապարակային պաշտպանության:

Մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Ա. Թոփուզյանը – Այսօր բոլորս համոզվեցինք, որ մենք գործ ունենք արդեն գիտնականի հետ, ով տիրապետում է թեմային, գիտի ինչ է

արել: Ատենախոսը քարտեզագրել է իր քայլերը, մեծ գործ է կատարել: Բայց աշխատանքը պետք է ճիշտ շեշտադրումներով ներկայացնել, հստակ օրինակներով: Աշխատանքը արված է, այն հեղինակի ստեղծագործությունն է, և իսկապես հարստացնում է աշխարհագրության ուսուցման մեթոդիկան: Այն, որ ասպիրանտը և ղեկավարը մեծ աշխատանք են կատարել, այն, որ կարող ենք հպարտանալ, որ այսօր մեր համալսարանում նման աշխատանք է պաշտպանության պատրաստվում, երկիմաստ չէ և միանշանակ է: Աշխատանքն իհարկե ամբողջական է: Որպես առաջարկություն՝ խորհուրդ եմ տալիս մշակել սովորողների հետազոտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ ուսուցչի կոմպետենցիաները, որովհետև առկա են մեթոդները, վերջնարդյունքները չափելու գործիքները տրված են, սակայն ուսուցիչը երրորդական պլանում է ներկայացվել: Այդպիսով՝ կամփոփեր համակարգը, չնայած այս ասպեկտը չի դիտարկվել նպատակի մեջ: Ես ևս առաջարկում եմ աշխատանքը ներկայացնել հրապարակային պաշտպանության: Խորհուրդ եմ տալիս ներկայացման ժամանակ հստակ շեշտադրումներով ներկայացնել ուսուցման տեխնոլոգիաների վերաբերյալ կատարված աշխատանքները, թե ինչպես եք գնահատում վերջնարդյունքները:

Մանկ. գիտ. թեկ. դոցենտ՝ Ս. Դայանը – Այսօր շատ խոսվեց Անի Մկրտումյանի, նրա կատարած աշխատանքի մասին: Ես ևս համամիտ եմ: Անին շատ պրպտող է: Եղել եմ նրա կուրսղեկը: Անին դեռ ուսանողության տարիներին առանձնանում էր հետաքրքասիրությամբ, իր պրպտելու հատկություններով: Ինչ վերաբերում է աշխատանքին, կարդացել եմ աշխատանքը, գրավոր կարծիք ներկայացրել, արել առաջարկություններ: Օրինակ՝ Բլումի տաքսոնոմիայի աղյուսակը կարելի է ներկայացնել կոնկրետ օրինակով, առավել ընդգծելով հետազոտության կարևորությունը: Անի Մկրտումյանը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործում առանձնահատուկ տեղ է հատկացրել միջառարկայական կապերին՝ մեջբերելով ավստրիական նորարարկան առաջարկներ: Երաշխավորում եմ հրապարակային պաշտպանության:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Այժմ քվեարկենք Անի Մկրտումյանի ատենախոսական աշխատանքը պաշտպանության երաշխավորելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միձայն քվեարկությամբ՝ երաշխավորել հրապարակային պաշտպանության ներկայացնելու:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Ռ. Գոգորյան

Արձանագրություն 5

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 թ.-ի հոկտեմբերի 25-ի նիստ։

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Ս. Դայանը, Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մաթոսյանը։ Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պարտքերի մարման արդյունքների ամփոփում։

Դասախոսներ, ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

2. Միջանկյալ քննությունների, ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների շուրջ կուրսերում բացատրական աշխատանքների անցկացում։

Դասախոսներ

3. Առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքի քննարկում, 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում և մագիստրատուրա 2-րդ կուսերի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպում և անցկացում։

Պրակտիկայի ղեկավար-մեթոդիստներ

4. Առկա և հեռակա բաժնի ուսանողներին հանձնարարվող կուրսային աշխատանքնեի թեմաների հաստատում։

Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

5. Հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսումնական գործընթացի կազմակերպում։

Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

6. Ընթացիկ հարցեր։

1. ԼՍԵՑԻՆ –- 2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պարտքերի մարման արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – 2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պարտքերի մարման արդյունքների ամփոփման հարցն է քննարկվոփւմ: Ներկայացրե՛ք ամփոփ պարտքերի մարման արդյունքները: Առաջին փուլը սեպտեմբերի 6-ից 13-ն էր, իսկ երկրորդ փուլը սեպտեմբերի 14-ից 20-ը: Առկա ուսուցման համակարգում՝ 1-ին փուլին մասնակցել է 44 ուսանող, բավարար ստացել են 22 ուսանող, անբավարար 16: Երկրորդ փուլին անավարար ստացած 16 ուսանողից, 10-ը ստացել են բավարար, 6 ուսանող անբավարար: Դեռևս պարտքեր կան:

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մուրադյանը, աշխ. գիտ. թեկ., դոցենտ, պրոֆեսորի պ/կ՝ Յու. Մուրադյան, մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ս. Դայան, մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ա. Մինասյան, աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մաթոսյան: Դասախոսները հակիրճ ներկայացրեցին պարտքերի մարման արդյունքները, 2-րդ փուլում չմասնակցած՝ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող՝ Վլադիմիր Վարդանյանն է, ով զորավարժությունների է մասնակցում: Հեռակա ուսուցման համակարգում 4-րդ կուրսի ուսանող՝ Սևակ Մնացականյանը չի ներկայացել 1-ին և 2-րդ փուլերին և հեռացվել է համալսարանից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ – Միջանկյալ քննությունների, ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների շուրջ կուրսերում բացատրական աշխատանքների անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Որոշ ժամանակ առաջ, շատ կարևոր հաստիք կար՝ կուրսղեկ: Տվյալ հարցերը չէին առաջանում այդ աստիչճան ծայրահեղ, քանի-որ յուրաքանչյուր կուրսի հետ կար աշխատող դասախոս, ով զբաղվում էր նմանատիպ հարցերով: Սակայն բոլոր դասախոսներն էլ, վստահ եմ, որ բացատրական աշխատանքներ իրականացնում են կուրսերի հետ: Այժմ ուսանողներ համար դժվար փուլ է, քանի-որ քննաշրջանը սկսվել է: Իհարկե չկա կուրսղեկի հաստիքը, բայց բոլորս պարտավոր ենք, կուրսերում իրականացնել համապատասխան աշխատանք:

Ասիստենտ՝ Վ. Հովհաննիսյան – Քանի-որ 1-ին կուրսի ուսանողները մտահոգված են միջանկայլ քննությունների հարցով, նրանց հետ քննարկեցի, բացատրոցի թե ինչպպես է իրականացվում քննությունները և նրանց մոտ էլ հարցեր չմնացին:

Մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ա. Մինասյան – Այս հարցի շուրջ, կարելի է մտածել մի լուծում, որովհետև կուրսղեկի հաստիքը շատ կարևոր նշանակություն ունի ուսանողի համար։ Դասախոսները այդ աշխատանքը իրականացնեն և ինչ-որ ձև դա արձանագրվի։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ուսումնական գործընթացի, ուսանողների կրթական որակը բարձրացնելու համար որոշակի աշխատանքներ անհրաժեշտ է տանել, և եթե բացատրական աշխատանքներն իրականացվեն, հաստատ արդյունքը ակնհայտ կլինի։ Կարևոր հանգամանք է նաև այն, որ ուսանողները կգիտակցեն, որ դասախոսի կողմից նրանք անտեսված չեն։ Որոշում ենք, անպայման պարբերաբար յուրաքանչյուրս մեր դասաժամերի սահմաններում որոշակի բացատրական աշխատանքներ իրականացնենք։

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մաթոսյան – Ապագայի համար կփորձենք հասարական կարգը դարձնել իրագործելի։

Մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ա. Մինասյան – Այս հարցի շուրջ անհարժեշտ է առանձն քննարկում, որպեսզի ուղղություններ, ձևաչափ որոշվի արդյունավետ իրագործման համար։

Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Հետագայում հնարավոր կարող է լինել ուսումնական պլանում ավելացնել դասաժամեր տվյալ հաստիքի համար։

Մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ս. Դայան – Միգուցե առաջին հայացքից թևա թե ուսանողները բացատրական աշխատանքների կարիք չունեն, սակայն այնքան հարցեր է ընթացքում առաջանում, որ դասախոսները ակամայից ամեն հարցով նրանց օգնում են, բացատրական աշխատանքներ են իրականցնում և կարելի է ասել դառնում են նրանց կուրսղեկները։ Համաձայն եմ առաջարկի հետ, քանի-որ արդեն ամեն ինչ կիրականանա համակարգված։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հանդես գալ նախաձեռնությամբ՝ ֆակուլտետի նիստում, վերականգնելու կուրսղեկի հաստիքը ։

3. ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքի քննարկման, 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման և մագիստրատուրա 2-րդ կուսերի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մուրադյան – 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջափուլը ամբողջ կուրսը ինձ մոտ է՝ 11 հոգի։ Պրակտիկան իրականցվել է Ժամկոչյանի անվան թիվ 119 հիմնական դպրոցում։

Հոգեբան, մանկավարժ աշխատում են պարբերաբար ուսանողների հետ։ Իրականացվել է արտադպրոցական միջոցառում։

Մանկ. գիտ. թեկ., դոցենտ՝ Ա. Մինասյան – 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան ընթացել է լավ։ Ինձ մոտ էին 8 ուսանող։ Փորձել են ուսանողների հետ՝ դպրոցում, աշակերտների հետ նոր մոտեցումներով աշխատել։ Նմանատիպ աշխատանքներ որոշ չափով իրականացվեց։ Յուրաքանչյուր դասից հետո իրականացվում էր քննարկումներ՝ ուսուցիչ-փոխտնօրեն-մեթոդիստ-մանկավարժ-հոգեբան-ուսանող։
Բացակայությունները պարտադիր նշվել են։ Ամեն ինչ ընթացել է նորմալ։

Ասիստենտ՝ Վ. Հովհաննիսյան - 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ժամանակ ինձ մոտ էին 7 ուսանող։ Աստոյան Արմինեն իմ խմբում էր և վերցրել է տարկետում։ Այդ հարցը արդ լուծվել է։ Դպրոցում կա երկու աշխարհագրության ուսուցիչ։ Այդ իսկ պատճառով ուսանողները բաժանվել են երկու ենթախմբի։ Բոլորի մոտ իրականացվել է դասալսումներ։ Խնդիրնր առաջացել են կորոնավարակի հետ կապված։ Դպրոցում փակվեցին չորդ դասարանները և ուսանողները չկարողացան վերջի շաբաթվա ընթացքում վարել դասեր։ Դպրոցից ուսանողներին ուղարկեցին տուն՝ համաճարակը կանխարգելելու նպատակով։

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մաթոսյան – Մագիստրատուրա 2-րդ կուսերի մանկավարժահետազոտական պրակտիկան անցկացվում է ինձ մոտ։ Կուրսում կա 8 ուսանող։ Սակայն մեծ մասը դասավանդում է դպրոցներում այդ իսկ պատճառով պրաիկտիկան անցկացնելու են հենց այդ դպրոցներում։ Միայն երկու ուսանող իրականացնելու է պրակտիկան համալսարանում։ Պրակտիկան սկսվել է այսօր։ Խնդիրներ դեռ չկան։

Աշխ. գիտ. թեկ., դոցենտ՝ Մ. Մուրադյան – Մագիստրատուրա ԼՊ 2-րդ կուսերի մասնագիտական պրակտիկան սկսվել է այսօր՝ 25.10.21թ.-ին և տևելու է երեք շաբաթ՝ մինչև 12.11.21թ.։ Ուսանողները այցելություններ են ունենալու Երևանի քաղաքապետարան, Բնապահպանության վարչություն և Քաղաքաշինության վարչություն։ Առկա ուսանողների պրակտիկան սկսվելու է 09.11.21թ., սակայն նրանք նույնպես մասնակցում են պրակտիկաներին։ Հնարավոր է համատեղել դասերի հետ։ Այսօրվա այցի ժամանակ ուսանողների հետ գնացինք Բնապահպանության վարչություն, բացատրական աշխատանքներ իրականացվեցին, հանձնարարություններ տվեցին ուսանողներին։ Խնդիրներ չկա։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն։

4. ԼՍԵՑԻՆ – Առկա և հեռակա բաժնի ուսանողներին հանձնարարվող կուրսային աշխատանքնեի թեմաների հաստատում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Առկա ուսուցման համակարգում՝ բոլոր ուսանողները ընտրել են թեմաները, արդեն սկսել են աշխատել։ Կուրսային աշխատանքներ ունեն Վ. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մաթոսյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը և Ս. Կրոյանը։ Կուրսային աշխատանքների թեմաների հաշվարոման օր՝ 25.10.21թ.։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն։

5. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսումնական գործընթացի կազմակերպում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգում ԱԴՄ ամբիոնը ունեցավ լուրջ խնդիրներ՝ կապված ուսանողների թվի հետ։ Այս պահի դրությամբ Աշխարհագրության բաժին հեռակա ուսուցման համակարգ դիմել և ընդունվել է 3 ուսանող, նրանցից 1-ը Ջվախքից։ Հեռակա ուսուցման 1-ին կուրսի դասապրոցեսը ընթանալու է երկու փուլով՝ 1-ին փուլը սկսվելու է նոյեմբերի 11-ից մինչը 15-ը, լինելու են դասեր համապատասխան ժամաքանակով։ Երկրորդ փուլը լինելու է հունվարի 3-ից 14-ը։ Դեկտեմբերի 6-ից 10-ը՝ 1-ին կուրսերում իրականացվելու է էլեկտրոնային առաջադրանքներ։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Ռ. Գոգորյան

Արձանագրություն 6

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 թ.-ի սեպտեմբերի 24-ի նիստ։

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, ։ Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը։

Օրակարգ

1. Ամբիոնի ասպիրանտների, հայցորդների հաշվետվությունները մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ։

Հայցորդներ, ասպիրանտներ

2. Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների կատարման ընթացքի հաշվետվություն։

Ղեկավարներ

3. Հեռակա ուսուցման մագիստրատուրա Լանդշաֆտային պլանավորման մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, նախապաշտպանությունների կազմակերպում։

Ղեկավարներ

4. Բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի մանկավարժական, մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների արդյունքների ամփոփում։

Ղեկավար մեթոդիստներ

5. Ընթացիք հարցեր։

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի ասպիրանտների, հայցորդների հաշվետվությունները մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը - Յուրաքանչյուր տարի տարվա վերջին իրականացվում է ասպիրանտների և հայցորդների ատեստավորում, ամբիոնում ունենք 2 հայցորդ և 1 ասպիրանտ։ Ղեկավարները հակիրճ նարկայացնեն, թե հայցորդների և ասպիրանտների աշխատանքները ինչ փուլում են գտնվում։ Ասպիրանտ՝

Հ. Հակոբյանի ղեկավարն է՝ Ն. Սամվելյանը, հայցորդ՝ Տ. Բաբայանի ղեկավարն է՝ Ա. Խոեցյանը, և հայցորդ՝ Է. Հարությունյանի ղեկավարն է Ս. Կրոյանը։

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը ներկայացրեց ասպիրանտի և հայցորդների հաշվետվությունները։ Քննարկվեց աշխատանքները, ներկայացվեցին առաջարկություններ։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկությամբ՝ մեկ ասպիրանտը և երկու հայցորդները՝ ատեստավորվում են։

2. ԼՍԵՑԻՆ – Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների կատարման ընթացքի հաշվետվություն։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը -

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման մագիստրատուրա Լանդշաֆտային պլանավորման մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, նախապաշտպանությունների կազմակերպում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը -

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՑԻՆ – Բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի մանկավարժական, մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների արդյունքների ամփոփում։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը -

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

5. ԼՍԵՑԻՆ – Գրախոսման վերաբերյալ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը -

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Ռ. Գոգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021թ. դեկտեմբերի 24-ի նիստի:

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Խոյեցյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Մ. Մինասյանը, Ս. Կրոյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ա. Աջամօղլյանը, Ս. Խաչատրյան, Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1. ԼՊ հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսկան ատենախոսությունների նախապաշտպանություն:
2. Դասախոսների հաղորդումները իրենց գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի 1-ին կիսամյակի հաշվետվությունների ներկայացում:
4. 1-ին կիսամյակի բանավոր քննությունների անցկացման նախապատրաստում, հարցաշարերի քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

- Կուրսային աշխատանքների արդյունքների ամփոփում:

1. **Լսեցին** – ԼՊ հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանության հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի գործընկերներ, այսօր տեղի կունենա «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների առաջին նախապաշտպանությունը, հաջորդ՝ բուն նախապաշտպանությունը կլինի հունվարի վերջին: Մագիստրոսները երկուսն են, ընդ որում մեկ ուսանող նախապաշտպանությանը միանալու է Ավստրիայից՝ առցանց:

Հաջորդիվ ելույթ ունեցավ մագիստորս՝ Վիկտոր Եփրեմյանը, ով ներկայացրեց աշխատանքի կառուցվածքը, նպատակը, թեմայի արդիականությունը, խնդիրները, վերջում կատարեց եզրահանգումներ, որոնք դեռևս մշակման փուլում էին: Աշխատանքը ներկայացնելուց հետո ամբիոնի դասախոսների և գիտական ղեկավարի կողմից տրվեցին հարցեր՝ վիճակագրական տվյալների թարմ լինելու, քաղաքի լանդշաֆտային պլանավորման սխեմայի և աշխատանքի պահանաջված լինելու վերաբերյալ:

Հաջորդ աշխատանքը ներկայացրեց մագիստրոս՝ Թամարա Խաչատրյանը, ով պատրաստել էր նաև սահիկահանդես: Նա նույնպես խոսեց մագիստրոսական թեզի

նպատակի, խնդիրների, թեմայի արդիականության, գիտական նորույթի, նյութերի հավաքագրման փուլում առաջացած դժվարությունների, դրանց հաղթահարման վերաբերյալ։Կատարեց նաև եզրահանգումներ և առաջարկություններ։

Գիտական ղեկավար՝ Ս. Դայանը իր մագիստրոսին ներկայացրեց որպես նպատակասլաց, պրպտող, աշխատասեր ուսանողուհի, ով ինքնուրույն կատարել է բոլոր հանձնարարականները։

Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը նկատառումներ ներկայացրեց մագիստրոսներին, որոնք մինչև 2-րդ նախապաշտպանությունը պետք է հաշվի առնել և շտկել։

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրոսական ատենախոսությունները, 2-րդ նախապաշտապանությանը, ներկայացնել ավարտուն կերպով։

2. Լսեցին- Դասախոսների հաղորդումները իրենց գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Այս տարի փոքր-ինչ պասիվ եմ եղել գիտահետազոտական աշխատանքների կատարման առումով, հասցրել եմ տպագրել մեկ գիտական հոդված՝ ՀՊՄՀ-ի Գիտական տեղեկագրում, իսկ ուսումնադաշտային պրակտիկաների վերաբերյալ ուսումնական ձեռնարկն էլ ընթացքի մեջ է, կարծում եմ, հաջորդ տարի արդեն կտպագրվի։

Գ. Կարապետյան- Աշխատում եմ մենագրության վրա, կարծում եմ եկող տարի լույս կտեսնի։

Ս. Բաղդասարյան- Այս տարի, ուսանողներից մեկի հետ համատեղությամբ, տպագրության ենք հանձնել մեկ գիտական հոդված, երևի թե մայիսին լույս կտեսնի։

Մ. Մուրադյան- Այս տարի պասիվ եմ եղել, առայժմ ոչ մի հոդված չեմ տպագրել։

Յու. Մուրադյան- Այս ընթացքում աշխատել եմ <<Հետիոտն զբոսաշրջություն>> մենագրության վրա, եկող տարի լույս կտեսնի։

Ս. Դայան – Այս տարի, ուսանողուհի Թամարա Խաչատրյանի հետ համատեղությամբ գրված մենագրությունը Գերմանիայում հանձնվել է հրատարակման։

Վ. Հովհաննիսյան- Տպագրել եմ մեկ գիտական հոդված՝ ուսանողուհի Մերի Առաքելյանի հետ համատեղ։

Մ. Մաթոսյան –Այս տարի արտասահմանյան գործընկերների հետ մեկտեղ տպագրել ենք ձեռնարկ համալսարանական ուսումնառողների համար, և մեկ գիտական հոդված էլ հանձնվել է տպագրության՝ ուսանողուհու հետ համատեղ։

Ս. Կրոյան- Այս տարի տպագրել եմ 5 գիտական հոդված, որից մեկը «Scopus» հեղինակավոր ամսագրում, եկող տարի նախատեսվում է տպագրել երկու ուսումնական ձեռնարկ և երկու գիտական հոդված։

Տ. Բաբայան-Այս տարի եղել եմ շատ ակտիվ, տպագրել եմ 5 հոդված, որից երկուսը միջազգային տեղեկագրերում, և համատեղության կարգով տպագրվել է նաև ուսումնաօժանդակ ձեռնարկ։

ՈՐՈՇԵՑԻՆ –Ընդունել ի գիտություն, և շարունակել աշխատաքները էլ ավելի ակտիվ կերպով։

3. **Լսեցին**- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի 1-ին կիսամյակի հաշվետվությունների ներկայացման հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը, ով նշեց, որ հաշվետու տարում ամբիոնի բոլոր աշխատանքներն իրականացվել են մշակված աշխատանքային պլանի համապատասխան: Դասախոսների կողմից վերանայվել, նոր առարկաների դեպքում նաև կազմվել են առարկայական նկարագրերը, ընթացիկ ստուգման հարցաշարերը, թեմատիկ տրոհումները, որոնք տեղադրվել են Classroom էլեկտրոնային հարթակում:

Քննարկվել և հաստատվել են մագիստրոսական ատենախոսությունների, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, կազմվել և հաստատվել են քննական տոմսերը, տարբերակներն ու թեստերը:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ամբիոնի կողմից իրականացվել է առկա, հեռակա ուսուցման և մագիստրատուրայի ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի վերանայում և կատարելագործում:

Արտահայտվեցին ամբիոնի այլ դասախոսներ, ովքեր ևս հաստատեցին, որ բոլոր աշխատանքները կատարվել են ուսումնական պլաններին և ծրագրերին համապատասխան և ոչ մի թերակատարու չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

4.**Ընթացիկ հարցեր:**

- Կուրսային աշխատանքների 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:

Արտահայտվեցին կուրսային աշխատանքների ղեկավարները՝ Վ. հովհաննիսյանը և Մ. Մաթոսյանը, ովքեր նշեցին, որ դեկտեմբերի 22-ին կայացել է 3-րդ կուրսի կուրսային աշխատաների պաշտպանությունը, ընթացքը եղել է նորմալ, բոլորը պաշտպանել են և ստացել համապատասխան գնահատականներ:

- Ամբիոնի մեթոդիստ՝ Ա. Մինասյանի կողմից առաջարկվեց յուրաքանչյուր առարկայի համար կազմել և հաջորդ ամբիոնի նիստին քննարկման ներկայացնել աշխարհագրական խնդիրներ և առաջադրանքներ, որոնք ուսանողների մոտ կզարգացնեն աշխարհագրական և մաթեմատիկական տրամաբանություն, մտածողություն, կձևավորեն աշխարհագրական երևույթների կապն ու տարածաժամանակային ընթացքն արտահայտող գրաֆիկներ, կորեր, դիագրամներ կազմելու և դրանք ինքնուրույն վերլուծելու կարողություններ և հմտություններ:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հունվարի 24-ի նիստի:

Մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Խոյեցյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, , Մ. Մինասյանը, Ս. Կրոյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ա. Աջամօղլյանը, Ս. Խաչատրյան: Հարգելի պատճառով բացակայում էին՝ Ս. Բաղդասարյանը և Մ. Մուրադյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1.Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն:
2.Classroom հարթակի մշտադիտարկում և 2-րդ կիսամյակի առարկաների էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների կազմում:
3.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատաքների ընթացքի քննարկում:
4.1-ին կիսամյակի քննությունների ընթացքը:
5.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանության հարցը:
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի գործընկերներ, այսօր տեղի կունենա «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների երկրորդ, վերջնական նախապաշտպանությունը: Հիշեցնեմ, որ մագիստրոսները երկուսն են, ընդ որում մեկ ուսանող՝ Եփրեմյան Վիկտորը, նախապաշտպանությանը միանալու է կրկին Ավստրիայից՝ առցանց, քանի, որ վարակվելով COVID -19-ով՝ չկարողացավ ժամանել Հայաստան:
Առաջինը ելույթ ունեցավ Թամարա Խաչատրյանը, ով ներկայացրեց մագիստրոսական ատենախոսության արդիականությունը, նպատակը, խնդիրները, աշխատանքի 3 գլուխները՝ իրենց ենթագլուխներով, վերջում կատարեց եզրակացություններ և առաջարկություններ: Այդ ամենը ուղեկցվում էր սահիկահանդեսով:
Աշխատանքը ներկայացնելուց հետո, ամբիոնի դասախոսներ՝ Գ. կարապետյանի, Ա. Մինասյանի, Ն. Սամվելյանի կողմից տրվեցին ատենախոսության շրջանակներում մի քանի հարցեր:
Հաջորդիվ առցանց կապ հաստատեց մագիստորս՝ Վիկտոր Եփրեմյանը, ով ներկայացրեց միայն աշխատանքի 1-ին գլուխը, քանի որ 2-րդը՝ դեռ ընթացքի մեջ էր: Թերի էր նաև ատենախոսության եզրակացություններն ու առաջարկությունները:
Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանի կողմից, խիստ ձևով, դրվեց այն հարցը, որ պետք է մինչև պաշտպանությունն՝ ամբիոն ներկայացվի ամբողջական ատենախոսությունը, այլապես աշխատանքը չի երաշխավորվի պաշտպանության:
ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Թամարա Խաչատրյանի մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության:
2.Վիկտոր Եփրեմյանի աշխատանքը երաշխավորել պաշտպանության՝ միայն ամբողջական և վերջնական տարբերակով ամբիոն ներկայացնելուց հետո:

2.Լսեցին- Classroom հարթակի մշտադիտարկում և 2-րդ կիսամյակի առարկաների էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների կազմման հարցը։
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Փետրվարի մինչև 9-ը կսկսվեն առկա ուսուցման դասերը, այդ իսկ պատճառով, ինչպես յուրաքանչյուր կիսամյակ, այնպես էլ, այս, պետք է Classroom հարթակում տեղադրվեն այս ամբիոնի նիստով հաստատված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսությունները, իսկ մագիստրատուրայում այն առարկաները, որոնք կլինեն առցանց, դրանց համար կտեղադրվեն էլեկտրոնային մատյաններ, որոնք պետք է վարել յուրաքանչյուր դասին։
Կարծում եմ բոլոր դասախոսներն էլ աշխատել են, վերանայել են ծրագրերը, հարցաշարերը, հարցատոմսերը, եթե կան վրիպակներ, բացթողումներ, խնդրում ենք այս ընթացքում շտկել, որպեսզի պանակները բացելուն պես՝ փաթեթները տեղադրվեն։
Արտահայտվեցին ամբիոնի բոլոր դասախոսները, ովքեր նշեցին, որ արդեն պատրաստ են 2-րդ կիսամյակի համար նախատեսված բոլոր առարակայական փաթեթները։
ՈՐՈՇԵՑԻՆ –Ընդունել ի գիտություն, վերանայել 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսությունները, հարցաշարերն ու հարցատոմսերը և նախօրոք ներկայացնել ամբիոն հաստատման։
3.Լսեցին- Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատաքների ընթացքի քննարկում։
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը – Կխնդրեմ բոլոր դասախոսների ներկայացնել ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքը։
Նշեմ, որ ավարտական կուրսում, ինքս ունեմ 2 աշխատանք, ուսանողների հետ վաղը պայմանավորվել ենք հանդիպել՝ կատարված աշխատանքները քննարկելու համար։
Գ. Կարապետյան - Մագիստրատուրայում ունեմ երկու ուսանող, որից մեկը Սիրիայից է, ում աշխատանքը, հետազոտությունները փորձում ենք հարմարացնել այստեղի պահանջներին, շատ տարբերվող աշխատանք է։
Ա. Աջամօղլյան – Ավարտական կուրսերի իմ ուսանողները աշխատում են, աշխատանքը ընթանում է նորմալ, խնդիրներ չկան։
Ս. Կրոյան –Առկայում ինձ մոտ նույնպես ամեն ինչ նորմալ է, ինչը չեմ կարող ասել հառակայի դեպքում, քանի որ ավարտական թեման ընտրած ուսանող՝ Բորիս Խաչատրյանը բացարձակ կապ չի պահում ինձ հետ։
Ա. Մինասյան- Մագիստրատուրայում ուսանողները նորմալ աշխատում են, ինչը չեմ կարող ասել հեռակաների համար, քանի որ երկու ուսանողն էլ կապ չեն պահում ինձ հետ՝ Տաթևիկ Մուրադյան և Արևիկ Ոսկանյան, այս առումով խնդիր ունենք, նույնը նաև հեռակայում է, ընդհանրապես տեղյակ չեմ այդ ուսնողներից։
Մ. Մաթոսյան – Ավարտական կուրսերում ունեմ երկու աշխատանք, նորմալ է, ուսանողներն աշխատում են։
Ա. Խոեցյան-Մագիստրատուրայում ղեկավարում եմ երկու թեզ, Սաղթելյան Ալան նորմալ աշխատում է, բայց մյուս ուսանողնուհին՝ Բադալյան Արմինեն գտնվում է ֆիզիոլոգիական կարգավիճակում և չի մասնակցելու պաշտպանությանը։
Ս. Դայան-Էպ 2-րդ կուրսի ուսանողնուհին՝ Կնյազյան Վիկտորյան, աշխատում է շատ լավ, իսկ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողներից մեկը՝ Աստարյան Անին աշխատում է, ընթացքը նորմալ է, իսկ մյուսը՝ Զաքարյան Սոնան խոստացել է շուտով ներկայացնել աշխատանքը։ Հեռակա ուսանողներից մեկ՝ Ծովինարը, փառահեղ աշխատում է, իսկ մյուսը՝ Հովհաննես Կալինան խոստացել է աշխատանքը շուտով ներկայացնել։
Ս. Խաչատրյան – Ավարտական կուրսերում ունեմ երկու ուսանող, կապ կա, աշխատում են, ընթացքը նորմալ է։

Ն. Սամվելյան – Փաստորեն հեռակայում ավարտական աշխատանքերի հետ կապված խնդիրներ կան, պետք ավելի հետևողական լինել։
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն։
4.Լսեցին-1-ին կիսամյակի քննությունների քննարկման հարցը։
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը – 1-ին կիսամյակոի քննությունների անցել են նորմալ, առանց խնդիրների, միջանկյալ գրավոր աշխատանքերը կազմակերպվել են առցանց, իսկ բանավոր քննությունները՝ առերես։
Այն ուսանողները, որոնք ստացել են անբավարար, նրանց համար, ինչես նախորդ տարիներին, այս տարի ևս, կկազմակերպվի լուծարքի 2 փուլ։
Արտահայտվեցին քննող դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Ա. Խոեցյանը և այլոք, ովքեր ևս հաստատեցին քննությունների պատշաճ կազմակերպման և անցկացման փաստը։
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն։
Ընթացիկ հարցեր։
- Քննարկվեց բակալավրիատում ուսուցանվող, յուրաքանչյուր դասընթացի թեմատիկ բովանդակության շրջանակներում աշխարհագրական խնդիրների և առաջադրանքների մշակման և այս ամբիոնի նիստին քննարկման ներկայացնելու հարցը։

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Յու. Մուրադյանը, Ս. Դայանը և այլոք, ովքեր նշեցին, որ գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ ուսանողներին տրվուն են համապատասխան առաջադրանքներ, հանձնարարություններ, իսկ աշխարհագրական խնդիրներ կարող են լուծել մաթեմատիկայի ժամին, կամ մասնագիտական առարկաների ժամանակ՝ օգտվելով արդեն պատրաստի աշխարհագրական խնդրագրքերից։ Բացի այս ամենից, ուսանողն ինքն էլ պետք է լինի պրպտող, նախաձեռնող, աշխատի իր մասնագիտական գիտելիքները ավելացնելու ուղղությամբ։

- Քննարկվեց Մ. Մաթոսյանի կողմից, առաջիկայում դոկտորական ատենախոսության թեմա առաջդրելու հարցը։

Արտահայտվեցի ամբիոնի բոլոր անդամները, որոնք դրական կարծիք հայտնեցին այդ հարցի շուրջ։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան
Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. փետրվարի 25-ի նիստի:

Ամբիոնի առցանց նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Խոյեցյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մինասյանը, Ս. Կրոյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը, Ա. Աջամօղլյանը, Ս. Խաչատրյան, Ս. Բաղդասարյանը և Մ. Մուրադյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1.Հեռակա ուսուցման մանակավարժական պրակտիկայի նախապատրաստում և ընթացիկի քննարկում:
2.Առկա ուսուցման միջանկյալների նախապատրաստում և հեռակա ընթացիքի քննարկում:
3.ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված նախատեսվող միջոցառումների քննարկում:
4.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Հեռակա ուսուցման մանակավարժական պրակտիկայի նախապատրաստման և ընթացիկի քննարկման հ արցը:
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հեռակա ուսուցման 5-րդ կուրսում արդեն ընթանում են մանակավարժական պրակտիկան՝ ղեկավարներ՝ Վ. հովհաննիսյան և Ա. Աջամօղլյան, իսկ 3-րդ և 4-րդ կուրսերը դեռ նախապատրաստական փուլում են, ղեկավարներն են՝ Ա. Մինասյանը, Ս. Խաչատրյանը և Ս. Դայանը: Կխնդրեմ մանակավարժական պրակտիկայի ղեկավարներին խոսել ընթացքի վերաբերյալ:
Վ. Հովհաննիսյան- Մանակավարժական պրակտիկա ունեմ հեռակա 5-րդ կուրսում, խումբը նորմալ հաճախում է, բացի Պետոյան Պետրոսից, դասերն էլ նորմալ պարապում են պրակտիկանտները, խնդիր չունենք:
Ա. Աջամօղլյան- Ինձ մոտ էլ պրակտիկայի ընթացքը նորմալ է, միայն 8 օր, վիրահատության պատճառով, բացակայել է Հովհաննիսյան Լիանան, որը արդեն դեկանատ ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանքը, հաճախակի բացակայում է նաև Բարսեղյան Էմման, բայց թույլատրելիի շեմը դեռ չի անցել:
Արտահայտվեցին նաև 3-րդ և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարները, որոնք նշեցին, որ պրակտիկան սկսվելու է փետրվարի 28-ից միչև մարտի 25-ը: Կարծում ենք տեղի կունենա կոնֆերանս և այդտեղ էլ կորոշվեն ընթացիկ անելիքները:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:
2.Լսեցին- Առկա ուսուցման միջանկյալների նախապատրաստում և հեռակա ընթացիքի քննարկում:
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Տեղեկացնում եմ, որ այսօր հեռակա ուսուցման միջանկյալների վերջին օրն է, որից հետո կսկսվի լուծարային փուլը, իսկ առկա ուսուցման դեպքում դեռ նոր պետք է սկսվեն, դեկանատի կողմից նախօրոք կազմվել են միջանկյալ գրավոր աշխատանքերի գրաֆիկները, որոնց համապատասխան պետք է ամբիոնը իրականացնի գրավորների անցկացումը: Մինչ այս պահը հեռակայում խնդիրներ չենք ունեցել, կարծում եմ առկայում էլ պատշաճ ձևով կկազմակերպվեն աշխատանքերը:

Արտահայտվեցին քննող դասախոսներ՝ Մ. Մուրադյանը, Յու. Մուրադյանը, Ա. Աջամօղլյանը, և այլոք, որոնք հաստատեցին, որ միջանկյալների ընթացքը անցել է նորմալ, առանց խոչընդոտների։

3.Լսեցին- ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված նախատեսվող միջոցառումների քննարկման հարցը։
Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը – Հարգելի ամբիոնի անդամներ, ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված կազմակերպվում է «Բնագիտության ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով գիտաժողով, խնդրում ենք, հատկապես ավարտական կուրսերին տեղեկացնել՝ թեզիսներ ներկայացնելու համար։
Տեղեկացնում եմ նաև, որ ուսուցիչների համար ևս ապրիլ, մայիս ամիսներին կազմակերպվելու է գիտաժողով «Բնագիտական առարկաների ուսուցման մեթոդական հիմնախնդիրները դպրոցում» խորագրով, իսկ այս տարվա հոկտեմբեր ամսին, ամբիոնը կազմակերպելու է գիտաժողով «Կոնստրուկտիվ ֆիզիկա և սոցիալ-տնտեսաաշխարհագրական հետազոտություններին ներկայացվող ժամանակակից պատվերները և ստացված արդյունքների օգտագործման պրագմատիկ նշանակությունը /Էներգետիկ բնատեխնածին գեոհամակարգերի օրինակով» թեմատիկայով, ակնկալում ենք ձեր բոլորիդ ակտիվ մասնակցությունը։
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն։
4. Ընթացիկ հարցեր։
ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանի հաղորդումը դոցենտ,՝ Ս. Կրոյանի, պրոֆեսոր՝ Ա. Խոեցյանի և դոցենտ Ս. Խաչատրյանի «Հողերի աշխարհագրություն՝ հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկը ֆակուլտետի խորհրդում հրատարակման երաշխավորելու հարցը։
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը – Հարգելի գործընկերներ այս հարցը քննարկվել է նաև անցած տարվա սեպտեմբերին, ամբիոնի բոլոր անդամները ծանոթ են ձեռնարկին, ուղղակի կարելի է թարմացնել և ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստին։
Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Խոեցյանը, Մ. Մուրադյանը, Ս. Դայանը և այլք, ովքեր ձեռնարկը համարեցին արդիական, ծրագրային պահանջներին համապատասխան, և կարևոր՝ ուսանողների համար։
ՈՐՈՇԵՑԻՆ - Միջնորդել ֆակուլտետի խորհրդին դոցենտ Ս. Կրոյանի, պրոֆեսոր Ա. Խոեցյանի և դոցենտ՝ Ս. Խաչատրյանի կողմից ներկայացված «Հողերի աշխարհագրություն՝ հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկը երաշխավորելու հրատարակման։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան
Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. մարտի 30-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Խոեցյանը, Գ. Կարապետյանը, Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մինասյանը, Ս. Կրոյանը, Ս. Դայանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մուրադյանը: Բացակա էին՝ Վ. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը և Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1. Աշխարհագրություն» և «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությունների առկա ուսուցման 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն /1-ին փուլ/ և պետական քննությունների նախապատրաստում:
2. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքների քննարկում:
3. Բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերի առաջին միջանկյալ քննությունների արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

1.**Լսեցին** – «Աշխարհագրություն» և «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությունների առկա ուսուցման 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանության /1-ին փուլ/ և պետական քննությունների նախապատրաստման հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի ուսանողներ, այսօր մագիստրոսական թեզերի նախապաշտպանության 1-ին փուլն է, որի ժամանակ ընդամենը պետք է ներկայացնել թե, մինչ այս պահը, ինչ աշխատանքներ եք կատարել և աշխատանքի քանի տոկոսն է պատրաստ, իսկ 2-րդ, բուն նախապաշտպանությանը մանրամասն կներկայացնեք թեզերը՝ կազմած սահիկահանդեսներին զուգընթաց:

Այնուհետև արտահայատվեցին մագիստրոսները, որոնցից երկուսը՝ Հարությունյան Մանեն և Վարդանյան Վլադիմիրը միացել էին առցանց: Նրանք նշեցին, որ բոլոր թեզերն էլ գրեթե պատրաստ վիճակում են, մնացել են ավարտին հասցնել միայն տեխնիկական, քարտեզագրական աշխատանքները:

Արտահայտվեցին նաև գիտական ղեկավարները, որոնք գոհ էին մագիստրոսների կատարած աշխատանքներից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն, և մինչ 2-րդ նախապաշտպանությունը ավարտին հասցնել բոլոր աշխատանքները:

2.Լսեցին- Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքների քննարկման հարցը:

Արտահայտվեցին – Պրակտիկայի ղեկավար՝ Ա. Աջամօղլյանը- Պաշտպանությունը անցել է նորմալ, իմ և ընկ. Հովհաննիսյանի խմբի բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատական, միայն Պետոյան Պետրոսը, կապված մոր առողջական խնդիրների հետ, չի ներկայացել պաշտպանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին- Բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերի առաջին միջանկյալ քննությունների արդյունքների ամփոփում։

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը-Բակալավրիատ 3-րդ կուրսում 1-ին միջանկյալին չեն ներկայացել երկու ուսանող, իսկ անբավարար գնահատական ստացել են երեք ուսանող։

Յու Մուրադյան- Միջանկյալ աշխատանք ունեցել եմ մագիստրատուրա 1-ին կուրսում, բոլորը ստացել են դրական գնահատականներ։

Ա. Մինասյան – Բոլոր ուսանողները ստացել են, անբավարար ստացողներ չկան։

Ա. Աջամօղլյան- Մագիստրատուրա 1-ին կուրսում ունեցել եմ միջանկյալ գրավոր աշխատանք, բոլորն էլ ստացել են դրական գնահատական։

Ս. Դայան -3-րդ կուրսում ունեցել եմ գրավոր աշխատանք, եղել են անբավարար գնահատվողներ, ովքեր լուծարային շրջանի 1-ին և 2-րդ փուլերում վերահանձնել են և ստացել դրական գնատականներ։ Իսկ երկու ուսանողներ՝ Մամյան Աննան և Շամասուրյան Լաուրան չեն ներկայացել քննությանը, դասերին էլ հաճախումը շատ վատ է, քննություններին հրաժարվում են պատասխանելուց։ Կարծում եմ այդ երկու ուսանողները կմնան 12 կրեդիտ։

Մ. Մուրադյան - Լպ մագիստրատուրա 1-ին կուրսում որպես 1-ին միջանկյալ ուսանողները հանձնել են ռեֆերատներ և ստացել դրական գնահատականներ, իսկ 3-րդ կուրսում կան երեք չներկայացած ուսանողներ, որոնք կմնան վերահանձման փուլ։

Մ. Մաթոսյան- 3-րդ կուրսում միջանկյալին երեք ուսանողներ չեն ներկայացել, մնացածը ստացել են դրական։

ՈՐՈՇԵՑԻՆ –Ընդունել ի գիտություն։

4.Ընթացիկ հարցեր։

ԼՍԵՑԻՆ- Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանի դոկտորական ատենախոսության թեմայի առաջադրման հարցը։

Ամբիոնում քննարկվեց Մ. Մաթոսյանի կողմից առաջադրված դոկտորական ատենախոսության «ՀՀ տարածքային զարգացման աշխարհագրական ցուցիչների համակարգը որպես ռեգիոնալ քաղաքականության իրականացման մեխանիզմ» թեման։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյանը, դասախոսներ՝ Յու. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ա. Մինասյանը, Մ. Մուրադյանը և այլոք։ Նրանք նշեցին, որ առաջադրված թեման արդիական է, ունի գիտատեսական և կիրառական նշանակություն։

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով արտահայտված կարծիքները՝ ԱԴՄ ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանի դոկտորական ատենախոսության թեմա առաջադրել «ՀՀ տարածքային զարգացման աշխարհագրական ցուցիչների համակարգը որպես ռեգիոնալ քաղաքականության իրականացման մեխանիզմ» և ներկայացնել ԿՔԱ ֆակուլտետի խորհուրդ՝ քննարկման։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան

Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

ԿՔՍ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. ապրիլի 20-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը: Բացակա էին՝ Ա. Խոեցյանը, Գ. Կարապետյանը, Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մուրադյանը, Ս. Խաչատրյանը և Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1. «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը /2-րդ փուլ/:
2. Էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների կիրառման ընթացքի քննարկում և մշտադիտարկում:
3. Դասախոսների գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի քննարկում և գնահատում /2022թ-ի հունվարից մինչ ապրիլ/:
4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը /2-րդ փուլ/:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի ուսանողներ, այսօր ձեր ավարտական աշխատանքների նախապաշտպանության 2-րդ, վերջնական փուլն է: Ամբիոնի կողմից նախօրոք տեղեկացվել էիք, որ աշխատանքները պետք է ներկայացնել սահիկահանդեսների ուղեկցությամբ, յուրաքանչյուր ուսանողի տրվելու է 7-10 րոպե ժամանակ:

Հաջորդիվ ելույթ ունեցան ուսանողները: Նրանք ներկայացնում էին ավարտական աշխատանքների նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդները, վերլուծում աշխատանքի գլուխները, վերջում կատարում եզրահանգումներ և առաջարկություններ:

Չնայած, որ բոլոր ավարտական աշխատանքները պատրաստ վիճակում էին, բայց մի քանի ուսանողների աշխատանքերում /ուսանողներ՝ Գրետա Ներսիսյան, Էմմա Ենոքյան, Տաթևիկ Մուրադյան/ առկա էին տեխնիկական և բովանդակային որոշ բացթողումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Երաշխավորել պաշտպանության 14 ավարտական աշխատանքներից 11-ը, իսկ 3-ը երաշխավորել պաշտպանության՝ լրամշակելու վերապահումով:

Քանի որ ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը սպասվածից ավելի երկար տևեց, հետևաբար օրակարգային մյուս հարցերը տեղափոխվեցին հաջորդ ամբիոնի նիստին:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան
Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. ապրիլի 21-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Մ. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մուրադյանը : Բացակա էին՝ Յու. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, Ա. Խոեցյանը, , Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, և Ս. Բաղդասարյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1.«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

1.Լսեցին – «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի ուսանողներ, ամբիոնի կողմից նախօրոք տեղեկացվել էիք, որ ավարտական աշխատանքները պետք է ներկայացնել սահիկահանդեսների ուղեկցությամբ, յուրաքանչյուր ուսանողի տրվելու է 7-10 րոպե ժամանակ:
Հաջորդիվ ելույթ ունեցան ուսանողները: Նրանք ներկայացնում էին ավարտական աշխատանքների նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդները, վերլուծում աշխատանքի գլուխները, վերջում կատարում եզրահանգումներ և առաջարկություններ:
Չնայած, որ բոլոր ավարտական աշխատանքները պատրաստ վիճակում էին, բայց շատ աշխատանքերում առկա էին տեխնիկական և բովանդակային որոշ բացթողումներ:
ՈՐՈՇԵՑԻՆ- Երաշխավորել պաշտպանության բոլոր ավարտական աշխատանքները՝ լրամշակելու վերապահումով:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչի ժ/պ՝ **Ն. Սամվելյան**
Ամբիոնի մասնագետ՝ **Գ. Բարսեղյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հունիսի 21-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Յու. Մուրադյանը Մ. Մինասյանը, Ա. Խոեցյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մաթոսյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Աջամօղլյանը, Ս. Բաղդասարյանը: Բացակա էին՝ Գ. Կարապետյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. Սամվելյանը:

Օրակարգ

1.2022-2023 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմում և քննարկում:
2.Ավարտական պետական քննությունների արդյունքների ամփոփում:
3.Ընթացիկ քննությունների արդյունքների քննարկում:
4.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2022-2023 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմում և քննարկում հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի ժ/պ Ն. Սամվելյանը- Հարգելի գործընկերներ, շատ բարդ խնդրի առջև ենք կանգնել, անցած ուսումնական տարվա հետ համեմատած այս տարի, ուսանողների թվի կրճատման և քիչ դիմորդների պատճառով, 957 ժ. պակասել է, երկրորդ՝ հարց է դրվել ժամերը բաշխել վերին շեմերով՝ պրոֆեսոր-800 ժամ, դոցենտ - 850 ժամ, ասիստենտ-950 ժամ: Այս չափորոշիչներով դասաբաշխում կատարելու համար ստացվում է մեզ հարակավոր է ևս 1234 ժամ, այսինքն յուրաքանչյուր դասախոսի հարկավոր է մոտավորապես 100-150 ժամ:
Արտահայտվեցին դասախոսներ՝ Ա. Խոեցյանը, Ս. Բաղդասարյանը, Մ. Մուրադյանը, Ա. Աջամօղլյանը, Յու. Մուրադյան
ՈՐՈՇԵՑԻՆ- Երաշխավորել պաշտպանության բոլոր ավարտական աշխատանքերը՝ լրամշակելու վերապահումով:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչի ժ/պ՝ Ն. Սամվելյան
Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 14

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հուլիսի 6-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ն. Սամվելյանը, Յու. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Ա. Խոեցյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, Ս. Բաղդասարյանը: Բացակա էին՝ Մ. Մաթոսյանը Գ. Կարապետյանը, Ս. Խաչատրյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

Օրակարգ

1. 2022-2023 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմում և քննարկում:

1. Լսեցին – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը 2022-2023 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմման և քննարկման հարցի վերաբերյալ:

Նա նշեց, որ ամբիոնի նիստը կազմակերպվել է դասախոսների պահանջով, ովքեր տեղյակ էին, որ քննարկվելու է օրակարգային մեկ հարց՝ այն է նախնական դասաբաշխման հարցը:

Մինչ հարցի մանրամասն քննարկմանն անցնելուն, Ռ. Սադոյանը տեղեկացրեց, որ 2022-2023 ուսումնական տարվա համար, ամբիոնում կրճատվել է մոտավորապես 2000 ժամ: Սա բացատրեց է նրանով, որ դիմորդներ չկան, առաջին կուրսեր, թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում չեն կազմվել, տրված ամբողջ ժամերը թողնվել է թափուր, իսկ հեռակա 1-ին կուրսի քննությունները եթե նախորդ տարիներին անցկացվում էին բուհում, առաջիկայում հնարավոր է կարգը փոխվի և ընդունելության քննությունները անցկացնի ԳԹԿ-ն, ինչն էլ ավելի կբարդացնի իրավիճակը:

Անդրադառնալով ֆակուլտետում քիչ դիմորդներ ունենալուն, նշվեց, որ կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ. տարվա կեսից ընդունելության կարգը փոխվել է, կոնկրետ աշխարհագրության բաժնի հինգ դիմորդներից մի քանիսը կտրվել են մաթեմատիկա առարկայից, քիմիա բաժնի մեկ և միակ դիմորդը կտրվել է կենսաբանություն առարկայից, և չի կարողացել նույնիսկ մասնակցել քիմիա առարկայի քննությանը, արդյունքում ստացվում է, որ «չկա դիմորդ չկա նաև դասախոս», ցավալի է, բայց փաստ:

Սուբյեկտիվ պատճառներից պետք է նշել դասախոսների կողմից իրականացվող հակաքարոզը, նեքին «խոհանոցի» ի ցույց դնելն ուսանողության շրջանում, անձնական խնդիրների լուծումը՝ ուսանողների ներկայությամբ:

Ահա սրանք են այն հիմնական պատճառները, որոնք հանգեցրել են այս բարդ իրավիճակին:

Նոր ուսումնական տարվա դասախոսների ծանրաբեռնվածության հետ կապված Ռ. Սադոյանը նշեց, որ դա միայն նախնական տարբերակն է, եթե մինչ սեպտեմբեր

մագիստրատուրա դիմեն զգալի թվով ուսանողներ՝ դասաբաշխման ներկայիս պատկերը կփոխվի, իրավիճակը կբարելավվի։ Այն դասախոսները, որոնք ըստ նախնական դասաբաշխման ժամեր չեն ստացել /Ա. Խոեցյան, Յու. Մուրադյան, Ս. Բաղդասարյան/ շատ հավանական է, որ նորից կհրավիրվեն, բայց պետք է աշխատել մեր ֆակուլտետ դիմորդներ բերելու ուղղությամբ։

Մինչ ամբիոնի նիստը Ռ. Սադոյանը դուրս էր բերել վերջին երեք տարիների ուսանողների ընդունելության վիճակագրական տվյալները, որոնք վերլուծելով, պարզ երևում էր, որ տարեցտարի նրանց թիվը կրճատվում է, սա հանգեցնում է ոչ միայն ժամաքանակի նվազման, այլև լսարանների կրճատմանը, իսկ այս խնդիրների լուծման միակ ուղին ուսանող «բերելն» է։

Արտահայտվեցին՝ Ա. Խոեցյանը, ով նշեց, որ նման իրավիճակներում բոլոր բուհերում ընդունված կարգ է դասաբաշխումը կատարել նվազագույն շեմով, որը թույլ կտա մասնագետին դաշտից դուրս չմնալուն, կամ բոլոր դասախոսների ժամաքանակը իջեցնել, որպեսզի կրճատվող դասախոսներ չլինեն։ Ա. Խոեցյանը, օրինակ բերելով, իրեն համարեց իր մասնագիտության ֆանատը, և հավալեց, որ ինքը ա.գ.դ, պրոֆեսոր է, 7 տարի ղեկավարել է այս ամբիոնը, 8 տարի միջազգային ծրագրեր է բերել բուհ, որպես կոորդինատոր այդ ծրագրերի, ու հիմա ադմինիստրացիան հանգիստ գտնում է, որ կարող է իրեն ժամ չտալ կամ ասել, որ ուսանող լինի նոր իրեն կհրավիրեն, ներողություն, բայց դե յուրե, իրավական տեսանկյունից ինչու՞ ինքը պետք է ուսանող գտնի ու բերի։ Նա խնդրեց վարչական կազմին տեղեկացնել, որ այս ամենին իրավական ընթացք է տրվելու։

Ռ. Սադոյանը ի պատասխան նշեց, որ ժամաքանակի բաշխման շեմերի հետ կապված ինքն անձամբ է առաջարկել դրանք իջեցնել, բայց պատասխանը հետևյալն է եղել, որ բուհում բացառություններ չկան, և դա այն կարգն է որով առաջնորդվում է բուհը, փոփոխել հնարավոր չէ։ Անգամ առաջարկել է բնագիտական բաժիններ դիմած դիմորդներին ընդունել բուհ հարցազրույցով, բայց առայժմ ընթացք չի տրվել։ Իսկ այն հարցին, որ այս պարագայում բոլոր դասախոսների ժամաքանակը կարող է նվազեցվել, պատասխանեց, որ բուհը յուրաքանչյուր աշխատակցի համար հարկ է վճարում և իրեն ֆինանսական տեսանկյունից ձեռնտու չէ և դժվար է այդքան 0,5 կամ 0,75 դրույք ունեցող դասախոսներին վարձատրել և զուգահեռ այդքան հարկ վճարել, բուհի բյուջեն դա թույլ չի տալիս։

Արտահայտվեց Յու. Մուրադյանը-Նա նշեց, որ բաշխման հետ կապված կարող եմ ասել, որ ճիշտ չէ կատարվել, քանի որ համաձայն ուսումնական գծով պրոռեկտորի կողմից ուղարկված շրջաբարեկանի, որպես մրցույթով աշխատանքի անցած դասախոս առաջիններից պետք է լիներ, որ ապահովվեր ժամերով, իսկ կրճատման դեպքում շեշտը դրվեր համատեղող դասախոսների վրա։

Իսկ ինչ վերաբերում է դիմորդներ բերելուն, ապա նշեց, որ բազմիցս բակալավրիատի շրջանավարտներին հրավիրել է, կանչել է ընդունվելու մագիստրատուրա, բայց չեն գալիս, պատճառը մանկավարժական պրակտիկաների պաշտպանության ժամանակ ուսանողներին ստորացնելն է, իսկ մեթոդիստներին նսեմացնելը։

Մ. Մուրադյանը – Նա նշեց, որ այո, ինքը որպես մեթոդիստ շատ վիրավորված է, քանի որ ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար՝ Ինեսսա Սիրեկանյանը քանի տարի է իր

կողմից ղեկավարված բոլոր թղթապանակներում առկա swot վերլուծությունները պաշտպանության ժամանակ, բոլոր ուսանողների ներկայությամբ համարում է սխալ, և ստացվում է, որ այդքան ժամանակ մեր կատարած աշխատանքերը իզուր են եղել, իսկ մասնագիտական առումով էլ շատ տգեղ է նման մոտեցումը: Հավելեց, որ այս խնդրով բազմիցս մոտեցել է դեկանին, և այսօր ևս, խնդրում է վերջիվերջո այս հարցին լուծում տալ:

Ս. Դայանը –Նա նշեց, որ այս հարցի հետ կապված, ինքն էլ ունի դժգոհություն, հատկապես վերջին պաշտպանության ժամանակ Ինեսսա Սիրեկանյանի վիրավորական մոտեցմանը իր անձի հանդեպ, կամ հեմեմատությունը ամբիոնի այլ մեթոդիստի հետ: Նշեց, նաև, որ մինչ այդ աշխատել են ֆակուլտետի այլ պրակտիկայի ղեկավարների հետ և նման խնդիրներ չեն եղել:

Ռ. Սադոյան ի պատասխան ելույթ ունեցողների նշեց, որ պետք չէ անձնական հարցերը պարզել ուսանողների ներկայությամբ, դա համարեց անթույլատրելի, նման իրավիճակներում հորդորեց լինել ավելի զուսպ և խնդրի մասին անմիջապես տեղյակ պահել իրեն:

Այս հարցի հետ կապված շեշտադրեց նաև այն փաստը, որ բոլոր դասախոսների մոտ կա այն թյուր կարծիքը, որ պաշտպանությունների ժամանակ հանձնաժողովի կողմից դրված գնահատականը վերաբերում է ոչ թե ավարտական աշխատանքին, թեզին, այլ կոնկրետ գիտական ղեկավարին, նման բան չկա, պարզ է, որ ոչ բոլոր ուսանողները կարող են բարձր գնահատական ստանալ, քանի որ ունեն տարբեր գիտելիքներ, կարողություններ և պետք չէ դրա վրա կենտրոնանալ: Իսկ մանակավարժական պրակտիկաների պաշտպանություններին հետայսու անձամբ ներկա կգտնվի և վերջում արդյունքները կքննարկվեն:

Ա. Խոեցյան հավելեց, որ օրակարգային հարցի հետ կապված ուզում է առաջարկել կոնկրետ այն քայլերը, որոնց վրա պետք է կենտրոնանալ.

1. Հաշվի առնել ՀՀ բոլոր բուհերի փորձը,
2. Հաշվի առնելով կոլեկտիվի շահերը, ոչ մեկին չտալ 0,75 դրույքից ավել և տալ որոշակի հիմնավորումներ ժամերի բաշխման հետ կապված,
3. Ամբիոնի գործունեության որոշակի գնահատականների հիմքեր համարել ոչ միայն ամբիոնի վարիչի և դեկանի, այլև ուսանողների տեսակետները, շահերը:

Առաջարկեց նաև հետամուտ լինել Սերվիս մասնագիտության բացմանը, որի գործընթացը մնացել է կիսատ:

Եվս մեկ անգամ շեշտադրեց իր դերը ամբիոնի զարգացման գործում և նշեց, որ վարչական կազմի միայն անձնական վերաբերմունքի պատճառով չեն կարող իրեն ժամեր չտալ, նախկինում ինքն էր պայքարում իր ամբիոնի աշխատակիցների համար, թույլ չէր տալիս, որպեսզի մարդ կրճատվի, հասնում էր դրական արդյունքի, դեկանի հետ միասին, հիմա ևս խնդրեց Ռ. Սադոյանին՝ որպես դեկան և ամբիոնի վարիչ, որը կրողն է ամբիոնի շահերի, պետք է պայքարի և թույլ չտա դասախոս կրճատվի և կոչ արեց պահել յուրաքանչյուր անձի:

Ռ. Սադոյան- Ի պատասխան Ա. Խոեցյանի, նշեց, որ տևական ժամանակ է, որ ինքն այս հարցով բանակացություններ է վարում, կատարում առաջարկություններ, հիմա էլ այստեղ հնչեցված բոլոր առաջարկները կփոխանցի, և լինելով պայքարող մարդ, ամեն

ինչ կանի պահելու թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին, և թե՛ ֆակուտետին տրված լսարանները, բայց հարցեր կան, որոնց հաստատողը ինքը չի։
Արտահայտվեցին նաև Ս. Դայանը և Ս. Բաղդասարյանը ովքեր նշեցին, որ ըստ Ն. Սամվելյանի կատարած նախնական դասաբաշման իրենց տրված ժամաքանակի վերաբերյալ, որոնք այժմ կրճատվել են կամ ընդհանրապես չեն տրվել, այն դեպքում, երբ իրենք առաջին կուրսում չեն դասավանդում, առաջարկվեց դասաբաշխման ժամանակ հաշվի առնել ստացված շրջաբերականը և հիմանական աշխատակից լինելը, հարցադրում արվեց, թե որտե՞ղ են այդ ժամերը, իսկ Ն. Սամվելյանը պատասխանեց, որ տարեցտարի ուսանողների թվի կրճատման հետ կապված կրճատվել են նաև առարկաներ և ժամեր։
Հարցին պատասխանեց նաև Ռ. Սադոյանը- նշելով, որ հիմա բուհում չկան հիմնական դասախոսներ, բոլոր մեկ ուս. տարով են, դասաբաշխման ժամանակ հաշվի է առնվել շրջաբերականի այն կետը, որ կրճատման դեպքում առաջնայնություն տալ համատեղողներին /միջանկյալ նշվեց, որ համտեղող Ս. Կրոյանի ժամերը ևս թողնվել է թափուր, բացի իր հայցորդի ղեկավարման ժամից/, բայց բոլոր դեպքերում այս հարցը հուլիսի 11-ին քննարկվելու է ռեկտորի հետ և արդյունքների մասին կտեղեկացվի։
Նիստի վերջում դասախոսները խնդրեցին Ռ. Սադոյանին ռեկտորի հետ հանդիպմանը մասնակցի նաև ամբիոնից մեկ աշխարհագետ, ներկայացուցիչ և առաջադրեցին Ա. Խոեցյանի թեկնածությունը։
ՈՐՈՇԵՑԻՆ- Նիստին հնչեցված բոլոր խնդիրներն ու առաջարկություններն, ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ռ. Սադոյանի գլխավորությամբ, ներկայացնել ռեկտորին և արդյունքների մասին տեղեկացնել ամբիոնին։

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան
Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան